ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ է 1993թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

Մայիս, № 4 (159), 2002թ.



Ինչպես արդեն հաղորդել ենք մեր թերթում, Ա.Չիբուխչյանի հեղինակությամբ «Գիտությունը» լույս է ընծայել «Դավթի վերադարձը» վավերագրությունը՝ Արցախյան հերոսամարտի «Սասունցի Դավիթ» ջոկատի մասին: Նույն հեղինակությամբ հրատարակության է պատրաստվում նոր ժողովածու՝ նվիրված Արցախյան ազատամարտիկներին օգնության հասած և հերոսական էջեր գրած օդաչուների մասին: Ստորև հրապարակում ենք «Հրամանատարը» ակնարկը՝ հատված ապագա գրքից, նվիրված թեև հերոսական, բայց քիչ ուսումնասիրված թեմային:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

1988 թվականից մասնակցել է Արցախյան ազատագրական պայքարին, պարգևատրվել է «Արիության համար» մեդալով և անվանական զենքով:

* * *

Կարծես թե նա հենց այդպիսին էր լինելու: Խաժակն, մրահոն, սլացիկ, վայելչակազմ: Գեղեցիկ: Գեղեցիկ մարմնով ու հոգով: Սրանք անհիմն գովեստներ չեն: Ուրիշների հոգսով ապրող այդ կիրթ ու բարեխիղճ մարդը խմորվում ու ձևավորվում էր մանկուց: Մեծանում էր գյուղում, խաղաղ ու հանգիստ ընտանեկան մթնոլորտում: Հասակակիցների շրջապատում ավելի հասուն ու լուրջ էր երևում: Աչքը երկնքին երազում էր... նայում էր ճախրող թռչուններին ու մտածում, թե որքա՜ն խորհրդավոր է այդ երկնային կապույտ անհունը: Դպրոցական առաջին իսկ տարիներից նրա երազանքը աստիճանաբար ու որոշակիորեն ձևավորվեց. ուզում էր օդաչու դառնալ, թռչել, ճախրել, զգալ... Բայց այդ երազանքին հասնել էր պետք: 5-րդ դասարանից սկսեց ավիամոդելներ հավաքել, 6-րդ դասարանում տարբեր սխեմաներից ինքնուրույն նոր մոդելներ էր հավաքում ու ... թռցնում: Նա հիացմունքով էր հետևում իր ձեռքով պատրաստած փոքրիկ ինքնաթիռների թռիչքին: Կյանքն իմաստավորվեց ցանկալի նպատակով: Նա խորասուզվեց տեխնիկայի մեջ: Արդեն 8-րդ դասարանում և հետո, մինչև դպրոցն ավարտելը, նա և քրոջ ամուսինը ստեղծեցին մի յուրօրինակ սաղոտային մեքենա՝ միակը [illegible] «ԲՎԳԻ»: Բայց դա [illegible] ճանապարհի սկիզբն էր միայն:

Հետագա քայլերը ավելի լուրջ էին: Օդաչու դառնալը Ռաֆիկի համար լոկ հրապուրանք չէր, այլև նպատակ, ուստի դպրոցն ավարտելուց հետո ուժերը փորձեց քաղաքացիական ավիացիայի օդաչուական ուսումնարանում: Սակայն տեղերը սահմանափակ էին ու ... մրցույթից դուրս մնաց: Առաջարկեցին սովորել Կրեմենչուգի ուղղաթիռային ուսումնարանում: Իհարկե, Ռաֆիկը չէր ուզում իր երազած Ան-2 օդանավից «տեղափոխվել» այն ժամանակ ոչ այնքան տարածում գտած ուղղաթիռի ղեկին, բայց համաձայնվեց: Համաձայնվեց ու մինչև այսօր գոհ է իր որոշումից:

– Ինչո՞ւ, – հարցնում եմ ես:

– Ինչո՞ւ, – կրկնում է հարցս, – ուղղաթիռով թռիչք կատարելու համար շատ ավելի մեծ կամքի ուժ է հարկավոր, ավելի շատ պատրաստակամություն: Ուղղաթիռով թռիչքը ավելի դժվար է, բայց ավելի... հաճելի: Այս մեքենան ինչպես ցանկանաս, այնպես կթռչի, որտեղ ցանկանաս՝ այնտեղ կիջնի: Նրա հնարավորությունները շատ ավելի մեծ են, և ինձ թվում է, որ ուղղաթիռով կարող ես պայքարել անգամ բնության արհավիրքների դեմ. էլ ո՞ւր մնաց՝ թշնամու:

Հետո, մռայլվում է, հիշում է... ծանր օրեր էին. 1988 թվականի փետրվարի վերջերից անձնակազմով սկսեցին թռչել Գետաբեկի և Դաշքեսանի գյուղերը՝ հայ ազգաբնակչությանը հագուստ, սնունդ, դեղորայք հասցնելու: Նա առաջին անգամ տեսավ Ադրբեջանի տիրապետության տակ գտնվող, կարիքի մեջ ապրող հայ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Ծնվել է 1961 թվականին, Արարատի շրջանի Տափերական գյուղում: Սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Ավարտելուց հետո ընդունվել է Կրեմենչուգի քաղաքացիական ավիացիայի ուղղաթիռային ուսումնարանը: 1982 թվականին վերադարձել է Հայաստան ուղղաթիռի օդաչուի որակավորմամբ և «Էրեբունի» օդանավակայանում աշխատանքի անցել: «Մի-8» ուղղաթիռի 2-րդ օդաչու Ռաֆիկ Մեհրաբյանը բազմիցս գործուղվում է նախկին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններ՝ Ուկրաինա, Տյումեն, Ուզբեկստան:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՄՇԵՎ - 125

«Վերհիշելով ակադեմիկոս ԱԼԵՔՍԱՆԴՐ ՁԱՔԱՐԻ ԹԱՄԱՄՇԵՎԻ կատարած արգասավոր աշխատանքը, աննախադեպ ներդրումն անասնապահության և անասնաբուծական գիտության զարգացման բնագավառներում վստահորեն կարող ենք ասել, որ այդպես կարող էր ապրել ու գործել մեծ հայրենասերն ու քաղաքացին, նվիրյալ գիտնականն ու մանկավարժը, որն իր 90-ամյա կյանքի 65 տարիներն անմնացորդ նվիրեց բոլորին՝ իր ժողովրդին և հայրենիքին...» (Հանդիսության բացման խոսքից):

Օրերս ՀՀ գիտությունների Ազգային և գյուղատնտեսական ակադեմիաների ղեկավարության համատեղ ջանքերով Ազգային Ակադեմիայի մեծ դահլիճում տեղի ունեցավ գիտական ընդլայնված նիստ՝ նվիրված հայկական անասնաբուծության մեծանուն

երախտավոր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Համամիութենական գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի (ВАСХНИЛ) պատվավոր անդամ, հանրապետության գիտության վաստակավոր գործիչ Ալեքսանդր Զաքարի Թամամշևի ծննդյան 125-ամյա հոբելյանին:

Այդ առթիվ երախտիքի խոսք ասացին նրա հետնորդները՝ անասնաբույծ-գիտնականները, որոնք պատշաճ գնահատեցին Ալ.Թամամշևի բազմաբեղուն գործունեությունը՝ արժևորելով նրան իբրև պրակտիկ արշավախմբային-հետազոտող անասնաբույծի, գիտնական-անասնաբույծի, ազգային-հասարակական գործչի, հիանալի մարդու: Ալ.Թամամշևի առօրյա գործունեությունը, ինչպես և գիտական հարուստ ժառանգությունը (բազում մենագրությունները, գիտական աշխատանքները), հատուկ ավանդ եղան այդ ոլորտին՝ դարասկզբից ի վեր, և անասնաբուծության համար կայուն հիմունքներ ծառայեցին երկա՜ր (դարով մեկ), և այսօր էլ ծառայում են որպես նրա վերելքի խոստումնալից, վստահելի ուղեցույց-խոսնակ... Եվ պատահական չէ, թե ինչպես են իրենց ուսուցչի գիտական ուսմունքով, ավանդներով տոգորված (նաև ներկայումս) նրա հետնորդները, սաները:

ՀՀ գյուղատնտեսական ակադեմիայի պրոֆեսոր *Արամ ԲԼՐՑՅԱՆԻ* զեկուցումը ամբողջապես բովանդակում էր Ալ.Թամամշևի կենսագրականը, որում նշվեց.

«Կովկասի տարածաշրջանում Թամամշևների հանրահայտ տոհմի այս մեկ զավակը ծնվել է 1877թ. ապրիլի 21-ին, Թիֆլիսում: Ավարտելով տեղի երրորդ դասական գիմնազիան (1898թ.), ուսումնառությունը շարունակում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական բաժանմունքում և ավարտելուց ետ (1903թ.) վերադառնում Թիֆլիս, աշխատանքի անցնում Կովկասյան գյուղատնտեսական ընկերությունում որպես անասնաբուծության մասնագետ, ապա անցնում Կովկասի հողագործության ժողկոմատ:

1905թ. Ալ.Թամամշևը մեկնում է Գերմանիա, ապա՝ Ավստրիա՝ ծանոթանալու ժամանակի գյուղատնտեսական առաջադիմական ուղղություններին:

Երկու տարի անց, Թիֆլիս վերադառնալով, Ալ.Թամամշևը հողագործության ժողկոմատում շարունակում է աշխատել ի նպաստ անասնաբուծության զարգացման՝ ղեկավարվելով [illegible]ի անասնապահության առաջին [illegible] հետազոտող, անասնաբուծության [illegible]ական Ալեքսանդր Քալանթարի կողմից: Վերջինիս մահվանից հետո, 1913թ., Ալ. Թամամշևը նշանակվում է գիտարշավի ղեկավար և շարունակում իր ուսուցչի գործը՝ ավարտելով Ղազախի գավառի տավարաբուծության հետազոտումը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԱՄՆ, Բոստոնի համալսարան. ապագա ու[illegible]տալրագրողները իրենց գործնական պարապմունքները անցկացնում են սեփական համալսարանական հեռուստաստուդիայում: Այո, ապագա հեռուստալրագրողը պետք է իմանա ոչ միայն շատ լեզուներ ու մարդկանց հետ զրուցելու վարպետություն, այլև հասկանա լույսի ու ստվերի լեզուն, ունենա պատկերային մտածողություն, այսինքն՝ պատկերի մեջ տեսնի, առանձնացնի միտքը և մտքի, խոսքի մեջ տեսնի նրա պատկերային արտահայտությունը: Տիրապետո՞ւմ են, այդ արվեստին մեր լրագրողները: Դիտելով մեր բազմաթիվ հեռուստածրագրերը, կարելի է հայ հեռուստալրագրողներին ցանկալ ավելին...

Վիկտոր ՖԱՆԱՐՋՅԱՆ
Ակադեմիկոս, Լ.Օրբելու անվան
ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն

ՆԱ ՀԱՆՃԱՐ ԷՐ ԹԵ ՈՐՊԵՍ ԳԻՏՆԱԿԱՆ, ԹԵ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Այս տարվա հուլիսին լրանում է մեր ժամանակների ականավոր ֆիզիոլոգ, ֆիզիոլոգիական խոշորագույն դպրոցներից մեկի հիմնադիր Լևոն Աբգարի Օրբելու ծննդյան 120 տարին: Հայաստանում Լևոն Օրբելու անունն են կրում Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ֆիզիոլոգիայի ինստիտուտն ու հայկական ֆիզիոլոգիական ընկերությունը: Այն փողոցը, որի վրա տեղակայված են այդ հիմնարկությունները կրում է Օրբելի երեք եղբայրների անունը: Ի դեպ, Լևոն Օրբելու ազդեցությունը կրել են ոչ միայն հայ ֆիզիոլոգները: Օրբելու անվան հետ են կապված համաշխարհային նշանակության հայտնագործությունները: Նրա արտահայտած մտքերն ու գիտական մտահղացումները հիմք են հանդիսացել նոր հետազոտությունների համար: Օրբելին հիմնովին վերակառուցեց մեր պատկերացումները ֆիզիոլոգիական գիտության բազմաթիվ բնագավառներում, նրա աշխատանքները այսօր ևս ապրում են լիարյուն կյանքով:

Այդ պատկառելի գիտնականի գիտական սխրանքը դրսևորվել է ոչ միայն նրա փայլուն հետազոտություններում և տեսական խոշորագույն ընդհանրացումներում, այլ նաև գիտնականի և մտածողի այն հանճարում, որը վերաբերում է գիտության կազմակերպմանը, բազմաթիվ հետազոտողների ուժերի միավորմանը և գիտական մեծ կոլեկտիվի նպատակաուղղմանը դեպի ժամանակակից գիտության արմատական խնդիրների լուծումը:

Լ.Օրբելու ստեղծագործական ուղին սկսվել է 1901 թվականից, Իվան Պավլովի լաբորատորիա մուտք գործելու պահից, որն այդ տարիներին զբաղեցնում էր Ռազմա-բժշկական ակադեմիայի ամբիոնը Սանկտ-Պետերբուրգում: Այստեղ, լինելով դեռ ուսանող, Օրբելին կատարում է իր առաջին գիտական աշխատանքը, ինչի համար Ռազմա-բժշկական ակադեմիայի կոնֆերենցիան նրան արժանացնում է ոսկե մեդալի: Ուսման ավարտից հետո Օրբելին շարունակում է գիտական աշխատանքները Ի.Պ.Պավլովի լաբորատորիայում՝ շուրջ 20 տարի մնալով նրա ամենամերձավոր աշխատակիցը Փորձարարական բժշկության ինստիտուտում և Ռազմա-բժշկական ակադեմիայում:

Սկսած 1913 թվականից Օրբելին ինքն է ղեկավարում մի շարք լաբորատորիաներ, իսկ հետագայում՝ Խորհրդային Միության առաջատար գիտական հիմնարկություններ: Ի.Պ.Պավլովի մահից հետո 1936-ից մինչև 1950 թթ. Լ. Ա.Օրբելու վրա է դրվում պավլովյան երկու խոշորագույն կոլեկտիվների՝ ԽՍՀՄ ԳԱ Ի.Պ.Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ԽՍՀՄ ԲԳԱ Ի.Պ.Պավլովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն նյարդային պաթոլոգիայի ինստիտուտի ղեկավարությունը: Սկսած 1955 թվականից մինչև մահը Լ.Ա.Օրբելին եղել է իր կողմից կազմակերպված ԽՍՀՄ ԳԱ Ի.Մ. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և կենսաքիմիայի ինստիտուտի տնօրենը:

Մի շարք տարիներ Լ.Ա.Օրբելին եղել է ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, ԽՍՀՄ ԳԱ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, Ռազմա-բժշկական ակադեմիայի պետ: Երկար տարիներ հանդիսացել է Լենինգրադի և Համամիութենական ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և ֆարմակոլոգիական ընկերությունների նախագահը, բազմաթիվ հանդեսների ու ժողովածուների պատասխանատու խմբագիրը:

Օրբելու հետազոտական մտքի կենտրոնական պրոբլեմը եղել է կենդանի օրգանիզմների գործունեության համադասեցման խնդիրը: Ըստ էության, այդ պրոբլեմը միավորել է բոլոր այն բազմաթիվ հարցերը, որոնցով նա զբաղվել է իր կյանքի տարբեր տարիներին:

Հետազոտվե՞լ է արդյոք սնուցողական, նյարդավորման հիմնահարցը, սիմպաթիկ նյարդային համակարգի սնուցողական դերի մեխանիզմները, ուսումնասիրվե՞լ են արդյոք մարդու ու կենդանիների պայմանական-ռեֆլեքսային գործունեության մեխանիզմները, կառուցվե՞լ է արդյոք տեսություն ուղեղիկի հիմնական ֆունկցիաների մասին, դիտարկվե՞լ են արդյոք վերլուծիչների փոխներգործության սկզբունքները՝ բոլոր այդ աշխատանքներում հիմնական պրոբլեմ են հանդիսացել կոորդինացիան, այն մեխանիզմների բացահայտումը, որոնցով բնորոշվում է ուղեղի աշխատանքի համադասեցումը, նրա տարբեր մասերի փոխադարձ կապը:

Բոլոր այդ հետազոտությունների մեթոդաբանական մոտեցումը որոշվել է պատմական մոտեցմամբ: Ուստի, Օրբելու առաջնային և կարևոր ծառայությունը համաշխարհային գիտության մեջ եղել է ֆիզիոլոգիական գիտության մեջ նոր առաջատար ուղղության էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ստեղծումը: Պրոբլեմի նկատմամբ տիրապետելով լայն կենսաբանական մոտեցումների և լինելով կենսաբանության բնագավառում պատմական մեթոդի ջատագով, Օրբելին ողջ իր ստեղծագործական կյանքի ընթացքում տարբեր հարցերի մշակման դեպքում ֆիզիոլոգիական գործընթացների ուսումնասիրության համար կիրառել է էվոլյուցիոն մոտեցման սկզբունքը: Զարգացման տեսությունը Օրբելու ձեռքերում դարձել է ֆիզիոլոգիական երևույթների հետազոտության հիմնական մեթոդներից մեկը: Օրբելին խորությամբ և բազմակողմանիորեն հիմնավորել է իր էվոլյուցիոն եզրակացությունները: Նա ձևավորեց այդ մոտեցման էությունը և որոշեց էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնական բովանդակությունը, որպես գիտություն:

Օրբելին մեծ մասնակցություն է ունեցել պայմանական ռեֆլեքսների մասին ուսմունքի մշակման գործում: Զարգացնելով պավլովյան դասական ուղղությունները, Օրբելին հետազոտություններ է կատարում նվիրված այն գործոնների ուսումնասիրությանը, որոնք բնորոշում են գլխուղեղի կեղևի վիճակը. նա վերլուծել է բարձրագույն նյարդային գործունեության վրա վեգետատիվ նյարդային համակարգի և ներքին սեկրեցիայի գեղձերի կողմից թողած ազդեցությունները: Օրբելու և նրա աշխատակիցների աշխատանքներում հատուկ ուշադրության առարկա է դառնում ենթակեղևային գոյացությունների կողմից մեծ կիսագնդերի կեղևի վրա թողած ազդեցությունների մեխանիզմների ուսումնասիրությունը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում կենդանիների վարքի ձևերի և ձեռքբերովի ու ի ծնե ռեֆլեկտոր ակտերի դերի պարզաբանման վերլուծության աշխատանքները: Անպայման ռեֆլեքսների կազմավորման հետազոտությունները ձևավորող պայմանական ռեֆլեքսների հետ փոխներգործության ընթացքում և մի շարք ի ծնե ձևերի «զարգացման» մասին պատկերացումները անմիջապես ծննդից հետո, որն արտակարգ արագ է հայտնաբերվում մարդու մոտ, գերազանցել են էթոլոգիայի բազմաթիվ նորագույն ձեռքբերումները:

Օրբելու հարուստ գիտական ժառանգության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում սիմպաթիկ նյարդային համակարգի ֆունկցիաներին նվիրված հետազոտությունները: Նա ապացուցում է այդ համակարգի համընդհանուր և յուրահատուկ ազդեցությունը օրգանիզմի սոմատիկական ֆունկցիաների վրա: Սիմպաթիկ նյարդը կարգավորելով հյուսվածքների մետաբոլիզմի ինտիմ գործընթացները (տրոֆիկ ազդեցություն), պայմաններ է ստեղծում իրեն իսկ հատուկ ֆունկցիաների լավագույն ձևով ընթանալու համար: Այսպիսով, այս կամ այն օրգանի աշխատանքը կախված կլինի այն բանից, թե ինչ չափով է այն պատրաստված ու հարմարված (ադապտացված) սիմպաթիկ նյարդերին օրգանիզմի ամենատարբեր պայմաններում գտնվելու դեպքում: Սիմպաթիկ նյարդային համակարգի դերի նման հասկացությունը ֆիզիոլոգիական գիտության ֆոնդ է մտցվում և նոր հասկացություն է համադասեցված գործողությունների մասին: Այսպես, քայլ առ քայլ կուտակվում են բազմաթիվ տվյալներ, որոնց գիտական վերլուծությունը կհանգեցնի սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական ազդեցության դերին նվիրված նոր տեսության ստեղծմանը:

Օրբելու աշխատանքները մեծ դեր են խաղացել վերլուծիչների ֆիզիոլոգիայի մշակման գործում: Օրբելու լաբորատորիաները պատկանել են այն կենտրոնների թվին, որտեղ ձևավորվեց զգայարանների ֆիզիոլոգիան: Հաջողված հետազոտությունները հնարավորություն են տվել առաջարկել պատկերացումներ տարբեր առբերող համակարգերի փոխներգործության և փոխհարաբերությունների վերաբերյալ: Այդ հասկացության զարգացումը թույլ է տվել մոտենալու ավելի լայն ընդհանուր ֆիզիոլոգիական պրոբլեմի լուծմանը՝ նվիրված օբյեկտիվի և սուբյեկտիվի փոխհարաբերություններին, բարձրագույն նյարդային համակարգի արտացոլման օրինաչափությունների ճանաչման հարցերին:



Օրբելու ուշադրությանն արժանացած մեկ այլ պրոբլեմ է հանդիսացել ողնուղեղային կոորդինացման պրոբլեմը: Լ.Ա.Օրբելու մոտեցումների յուրօրինակությունը այդ կարևոր հարցում կայանում է նրանում, որ ժառանգորեն ամրացված կոորդինացման հարաբերությունների առաջացման մեխանիզմների հասկացման համար օգտագործել են Ի.Պ. Պավլովի հայտնաբերած պայմանական ռեֆլեքսների կազմավորման օրինաչափությունները: Վերջույթների դեաֆերենտացիայի կլասիկ փորձերը հնարավորություն են տվել հստակորեն հետևելու նյարդային գործընթացների գեներալիզացման և մասնագիտացման, դիֆուզ նյարդային գործունեության փոխարինման, կարգավորման գործունեության երևույթների վրա: Այս հետազոտություններում է դրսևորվել Օրբելու ունակությունները որպես էքսպերիմենտատորի, կենտրոնացնելու ուշադրությունը այնպիսի փաստի վրա, որը սերտորեն կապված է խոշորագույն պրոբլեմի հետ և հանդիսանում է հիմնական օղակ հաղորդող երևույթների շղթայում ու հնարավորություն կտա պարզել ողջ պրոբլեմը ամբողջությամբ:

Լևոն Օրբելու ձգտումը խորությամբ հասկանալ շարժողական գործողությունների կոորդինացման բնույթը իր արտացոլումն է գտել ուղեղիկի ֆիզիոլոգիային նվիրված հետազոտություններում: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքները թույլ են տվել ուղեղիկը դիտարկել որպես օրգանիզմի ռեֆլեկտոր գործունեության համընդհանուր մոդուլյատորի, որը շարժողական ապարատի հետ զուգընթաց հսկում է նրա զանազան վեգետատիվ և աֆերենտ ֆունկցիաները: Ժամանակակից աշխատանքները, որոնք նվիրված են ուղեղիկի ֆունկցիաներին, ոչ միայն հաստատել են այդ դրույթները, այլ նաև առավել չափով բացահայտել են այն ինտիմ մեխանիզմները, որոնց միջոցով ուղեղիկը իրականացնում է մոդուլյացիան:

Ուղեղիկի վնասումները չեն հանգեցնում շարժումների որևէ խմբի դադարեցման կամ շարժողական ակտիվության անդամալուծության: Սակայն ուղեղիկը հանդիսանում է ռեֆլեկտոր աղեղների ֆունկցիոնալ վիճակի և ֆունկցիոնալ պատրաստվածության կենտրոն: Օրբելու պատկերացումներում արգելակման կայունացման դերը արտահայտվում է որպես ուղեղիկի ընդհանուր մոդուլացնող ազդեցության հիմնական մեխանիզմներից մեկը: Այժմ այդ դրույթն իր փայլուն հաստատումն է ստանում էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններում, որոնք բացահայտել են արգելակման մեխանիզմների արտակարգ զարգացվածությունը ուղեղիկի կեղևում, երկարատև դեպրեսիայի ֆենոմենը, ուղեղիկի կեղևի միակ արտատար նեյրոնների Պուրկինյեի բջիջների արգելակող բնույթը:

Լևոն Օրբելու ղեկավարած գիտական հիմնարկներում կարևոր տեղ է զբաղեցրել պաշտպանական թեման: Բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լ.Օրբելին մեծ ներդրում ունի նաև ռազմական բնագավառում: Դրանք ընդգրկում են խորջրյա իջեցումների ֆիզիոլոգիան, բարձր և արագ թռիչքների ֆիզիոլոգիան, աերոնավտիկայի շատ հարցեր: Հենց այն ժամանակներին, ստրատոստատների առաջին թռիչքներից հետո, սաղմնավորվում են ապագա կոսմիկական կենսաբանության, մարդու կողմից կոսմիկական տարածության հաղթահարման հետագա հաջողությունների հիմքերը:

Լևոն Աբգարի Օրբելու կյանքի ուղին նրան բնութագրում է որպես ականավոր գիտնականի և խոշորագույն հասարակական գործչի, որը մեծ ազդեցություն է թողել ֆիզիոլոգիական գիտության և նրան հարակից ուղղությունների զարգացման վրա: Եվ այսօր մենք շնորհակալությամբ և մեծագույն հարգանքով ենք վերաբերվում նրա գիտական ահռելի վաստակին և չենք դադարում հիանալ հանճարեղ գիտնականի, քաղաքացու և հրաշալի մարդու կերպարով:

ՄՐՑՈՒՅԹ

ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքը հայտարարում է մրցույթ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի թափուր տեղի համար:

Տնօրենի պաշտոնում թեկնածուների առաջադրման իրավունքը, համաձայն ընդունված կարգի, պատկանում է բաժանմունքի բյուրոյին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդին, այլ ինստիտուտների և բուհերի գիտական խորհուրդներին, տվյալ մասնագիտության գծով ՀՀ ԳԱԱ անդամներին:

Թեկնածուների հիմնավորված առաջարկությունները 1 ամսվա ընթացքում ուղարկել հետևյալ հասցեով՝ Երևան 19, Մարշալ Բաղրամյանի պող. 24, ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք, հեռ. 52-77-22:

ՀՀ ԳԱԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Սկիզբը 1-ին էջում)

1920-ականներին գավառներում կազմակերպում է կենդանիների ցուցադրական-փորձնական կերակրում, և ապացուցում, որ կերակրման գործոնն առաջնահերթ խնդիր է տեղական ցեղերի մթերատվությունը 1,5 - 2 անգամ բարձրացնելու տեսակետից:

Այդ տարիներին նա կաթնապրանքային տնտեսություններում կիրառության է դնում դեռևս նոր օգտագործվող սարքերը՝ սերզատներ, յուղհաններ, տակարներ և այլն:

Հաշվի առնելով տաղանդավոր անասնաբույծի նպատակասլաց գործունեությունը Անդրկովկասի անասնապահության զարգացման գործում, 1920թ. նա նշանակվում է Անդրֆեդերացիայի պետպլանի անասնաբուծության գծով գլխավոր խորհրդական:

1920 – 1928թթ. Ալ.Թամամշևը կազմակերպում է Թիֆլիսի նախ պոլիտեխնիկական ինստիտուտի, ապա պետհամալսարանի և գյուղատնտեսական ինստիտուտի ընդհանուր և մասնավոր անասնաբուծության ամբիոնները և ղեկավարում դրանք:

Վրաստանում աշխատած տարիներին Ալ.Թամամշևն իր լուրջ ավանդն է բերում նաև վրաց անասնաբույծների դպրոցի հիմնադրմանն ու զարգացմանը:

1930թ. սկսած Ա.Թամամշևը իր ողջ գործունեությունը կենտրոնացնում է Հայաստանում՝ մշտական բնակություն հաստատելով Երևանում: Այստեղ առաջին գործը, որ նրա կողմից ձեռնարկվեց անասնաբուծության գիտահետազոտական հիմնարկության՝ հանրապետական կաթնային տնտեսությունների փորձակայանի հիմնադրումն էր, որի առաջին տնօրենն էր հենց ինքը՝ անասնաբուծության ձեռներեցը, հմուտ գիտակը: Մի քանի տարի անց (1935թ.) փորձակայանի բազայի վրա նրան հաջողվում է կազմակերպել անասնաբուծության փորձարարական կայանը ապա՝ 1943թ. անասնապահության և անասնաբուծության գ/հ ինստիտուտը, ուր պրոֆեսորանասնաբույծի անմիջական ղեկավարությամբ ծավալվում են գիտահետազոտական սելեկցիոն բուռն աշխատանքներ՝ ինչպես տավարի, այնպես էլ գյուղատնտեսական մանր կենդանիների պլանային գլխաքանակի աճեցման և կատարելագործման ուղղությամբ, որին մասնակից են դառնում բազմաթիվ գիտական և արտադրության աշխատողներ: Նույն թվականին Ալ.Թամամշևը Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտում հիմնադրում է մասնավոր անասնաբուծության ամբիոն, որի անփոփոխ վարիչն էր նա մինչև 1954թ. (իր կյանքի ավարտը), միաժամանակ վարում էր անասնաբուծական ֆակուլտետի դեկանի պարտականությունը:

Առանձնապես գնահատելի են Ալ.Թամամշևի ձեռնարկումները Լոռու սարահարթի տնտեսություններում, որոնք մասնավորապես սպասարկում են Լոռու տոհմային գործարանում և Ստեփանավանի պետտոհմաբուծարանի գոտում: Այստեղ նրա նախաձեռնությամբ (և ղեկավարությամբ) հետևողական ուսումնասիրություններ են կատարվում կենդանիների կերակրման, աճի և զարգացման, մթերատու հատկանիշների գնահատման, սելեկցիայի (ընտրության և զույգընտրության) թեսթերի ուղղությամբ: Ալ.Թամամշևը նաև գործուն մանկավարժ էր, անասնաբուծության բնագավառի կադրերի պատրաստման երախտավոր, գիտության մի քանի տասնյակ դոկտորներ և թեկնածուներ, հարյուրավոր բարձրակարգ անասնաբույծ-մասնագետներ կյանք են մտել, աճել պրոֆսորի հոգատարության և ջանքերի շնորհիվ:

Եվ իրավամբ՝ ակադեմիկոս Ալ.Թամամշևը համարվում է անդրկովկասյան անասնաբուծական գիտական դպրոցի հիմնադիրը:

Ակադեմիկոս Ալ.Թամամշևը պարգևատրվել է կառավարական բարձրագույն պարգևներով՝ Լենինի և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, մեդալներով, պատվոգրերով: Նրա անունով է կոչվում Գավառի (նախկին Կամո) գյուղատնտեսական տեխնիկումը: Այն տան պատին, ուր նա բնակվել է Երևանում, ամրացվել է հուշասալիկ...»:

«Ալեքսանդր Թամամշևը դարասկզբից ի վեր մեծապես մտահոգված էր փոքրկովկասյան տավարի կատարելագործման խնդրով և մեծ նպատակ ուներ տարածաշրջանում ստեղծելու տավարի բարձր մթերատու, վաղահաս տեղական (էնդեմիկ) ցեղ, – նշեց գյուղ. գիտությունների դոկտոր, Անասնաբուծության և անասնաբուժության գիտական կենտրոնի տավարաբուծության բաժնի վարիչ ԽԱՉԱՏՈՒՐ ՍԻՄՈՆՅԱՆԸ: Եվ նրա կողմից նախանշված ու գիտականորեն



հիմնավորված գործընթացը՝ ուղղված նոր ցեղի ստացմանը, փուլ առ փուլ բարեխղճորեն կատարեցին (իրականացրին) նրա ժամանակակից և հետնորդ անասնաբույծ- սելեկցիոներները և գիտնականները (ահա նրանք՝ Շավարշ Ժամակոչյան, Հարություն Գալստյան, Վաղինակ Ոսկանյան, Վլադիմիր Զորանյան, Արամ Բլրցյան, Խաչատուր Սիմոնյան և ուրիշներ), որոնք իրագործեցին նպատակադիր սելեկցիոն աշխատանքներ՝ կիրառության կոչելով տավարաբուծության առաջադեմ՝ բարդ տրամախաչման եղանակներ, ցածր մթերատու տեղական տավարը (կովերը) տրամախաչելով Շվեյցարիայից ներկրված շվից և սիմենթալ ցեղերով (ցուլերով), և ստացված խառնածինները մի քանի սերունդ բուծելով ինքն իր մեջ՝ (հետևողականորեն ապահովելով կերակրման և խնամքի բարենպաստ պայմաններ), տասնամյակների ընթացքում ստացման մթերատու հատկանիշների որոշակի բարձր ցուցանիշներով բնութագրվող տավար: Ցեղագոյացման աշխատանքների արդյունքները տակավին նոր, (նախկինը գերազանցող) բնագծեր էին, որ համապատասխանում էին նոր ցեղի մթերատվության առաջին ստանդարտին. ըստ լակտացիայի տարիքի I և III, կիթը՝ 2000 – 2800 կգ, կաթի յուղը՝ (%) 3,9, կենդանի զանգվածը՝ 380 – 430, (իսկ աբորիգեն (պրիմիտիվ) տեղական տավարինը կազմում էր, համապատասխանաբար՝ 400 - 500կգ, 3.2-3.4 %, 150-200կգ): Այդ ստանդարտում էլ քննություն է բռնում ստացված նոր տիպի (ցեղի) տավարը և 1960թ. արժանանում է պետական հաստատման՝ «կովկասյան գորշ» ներառած Անդրկովկասյան հանրապետությունները՝ ըստ բուծման և տարածվածության աշխարհագրության: Մեր հանրապետությունում կովկասյան գորշը հանդիսացավ առաջին պլանային բուծվող տավարը (ցեղը):

90-ական թվականներին, ըստ հանրապետության տոհմային տնտեսությունների տվյալների կովկասյան գորշի մթերատվության օպտիմալ սահմանները գերակայել են նախորդ ստանդարտները, որ խոսուն ապացույցն է նրա մթերատվության ժառանգական կայունության:

ՌԱԶՄԻԿ ՎԱՌՅԱՆ (գյուղ. գիտ. դոկտոր

պրոֆեսոր, խոզաբուծության բաժնի վարիչ). – «Լուրջ ուշադրության է արժանի Ալ.Թամամշևի հայեցողությունը Հայաստանի անասնապահության ընդհանուր վիճակի հանդեպ. դեռևս 1926թ. իր իսկ ղեկավարությամբ կատարված էքսպեդիցիոն (արշավախմբային) հետազոտությունների արդյունքում բացահայտվեցին շատ կարևոր տվյալներ, ըստ որի արժեքավորվում է ճյուղի դերը երկրի ընդհանուր էկոնոմիկայում: Այսպես՝ այն ժամանակ ապրանքային եկամուտը անասնապահությունից գյուղատնտեսության ընդհանուր եկամուտների հաշվեկշռում կազմել է 52 %, ըստ որում՝ տավարաբուծությունից՝ 62 %, ոչխարաբուծություն-այծաբուծությունը՝ 31, ծիաբուծությունը և էշաբուծությունը 2, թռչնաբուծությունը 3, մեղվաբուծությունը 1.5, իսկ խոզաբուծությունն ընդամենը 0.3 %:

Այսինքն, անասնապահության ընդհանուր եկամուտները նշանակալից չէին, և ճյուղը գտնվում էր (կրում էր) լոկ սպառողական (потребительский характер) բնույթ, և շուկայում իրացվում էր արտադրանքի միայն 20 %:

Ալ.Թամամշևն ի սկզբանե արժեքավոր նկատառումներ ուներ նաև խոզաբուծության ուղղությամբ, նկատելով, որ տվյալ ժամանակաշրջանում ճյուղը երկրորդական դեր ունի, չէր ժխտում (և նախանշում էր) դրա արդյունավետ ապագան՝ հիմք ընդունելով կերակրման բարելավման բարձր պայմանները և պահանջարկը, որոնց շնորհիվ ճյուղի զարգացումը կընթանա դեպի *արդյունաբերական* մակարդակ: Այդ ժամանակներում Հայաստանի խոզերը բնութագրվեցին (ըստ էքսպեդիցիոն տվյալների) իբրև ուշահաս, ցածր մթերատու կենդանիներ, որից ելնելով Ալ.Թամամշևը առաջարկեց գիտականորեն վերաբերվել ճյուղին, այսինքն՝ բարելավել արյան նորացմամբ (порода кровь) կուլտուրական բարձր մթերատու ներկրված ցեղերով, ինչպիսին սպիտակ, խոշոր բեկշիրյանն է:

Բարելավող ցեղը ընտրելիս նա խորհուրդ էր տալիս (առաջարկում էր) հաշվի առնել նաև վերջինիս պիտանիությունը՝ բեկոնային մսեղիքի արտադրության (համար) նշանակությամբ:

Եվ ակադեմիկոս Ալ.Թամամշևի գիտական իդեաներն ու պրակտիկ ծրագրերը ժամանակի ընթացքում կյանքի կոչվեցին Հայկական անասնապահության և անասնաբուծության գիտահետազոտական ինստիտուտի առաջնորդությամբ՝ գյուղ. կենդանիների կատարելագործված ցեղերի ստացմամբ՝ ի նպաստ Հայաստանի անասնաբուծության առաջընթացի:

Խոզաբուծությունը հանրապետության գյուղատնտեսության (անասնաբուծության) երկրորդական ճյուղից վերաճեց առաջատարի. 1987– 88թթ. խոզերի ընդհանուր քանակը կազմում էր 344 հազար (1926թ. 33 հազարի դիմաց): Անասնապահության մսային բալանսում այն կազմեց 22 – 24 %, իսկ անասնապահության ապրանքային արտադրության ընդհանուր արժեքում խոզաբուծության մասը (չափը) կազմեց 15 – 20 % (1926 0.3 %-ի դիմաց): Ալ.Թամամշևի կանխատեսումը խոզաբուծությունը արդյունաբերական դարձնելու ուղղությամբ, նույնպես իրականության վերածվեց (դարձավ), արդյունաբերական հիմունքներով կառուցվեցին խոզաբուծական համալիրներ՝ 54, 24, 20 և 10 հազ. գլուխ բտվող խոզերի նկատառումով, կազմակերպվեց մասնագիտացված տոհմային տնտեսությունների ցանց՝ 1400 գլուխ մայրակազմով, որտեղից տարեկան իրացվում (առաքվում էր) 6 հազար բարձրարաժեք տոհմային մատղաշ: Իսկ ա՞յժմ... Անասնաբուծության գ/հ ինստիտուտի լինել-չլինելու հարցն է օրակարգում, գ/հ աշխատանքները չեն կարող ընթանալ ոչ միայն այն պատճառով, որ ինստիտուտը միակցվել է 40 կմ հեռավորության վրա գտնվող գիտ. կենտրոնին, որի հանգամանքը թե ֆիզիկական և թե նյութական առումներով խափանում են նորմալ գործունեությունը, այլև այն կարևոր պատճառով, որ ինստիտուտից վերցվել են երբեմնի փորձարարական տնտեսությունները (բազաները): Այս առումով մի հեռավոր հույս՝ նշույլ կա, որ ցեղերի գենոֆոնդի պահպանման և անասնաբուծության զարգացման վերելքի գործընթացը ներկայումս կարելի է իրականացնել գյուղացիական տնտեսություններում վեր ելած *ֆերմերայինների* միջոցով (ինչպիսիք են՝ Կոտայք-Առինջի «Ծառուկյան», Հրազդանի «Որդի Արմեն», Արզնիի անասնաբուծականները և այլն), որը կազմակերպական բարձր մակարդակի (կառավարական) միջոցառման պետք է վերածել...»:

ՎԼԱԴԻՄԻՐ ԶՈՐԱՆՅԱՆ (գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Հայկական գյուղ. ակադեմիայի գենետիկայի ամբիոնի վարիչ). –

«Մեզանում ընդունված է յուրաքանչյուր անգամ մեր մեծանուն երախտավոր գործիչների ծննդյան և գործունեության հոբելյանական հանդիսությունների անդրադառնալ նաև նրանց գործնական պատգամներին, հատկապես որոնց կատարման ճանապարհին (ընթացքում) տեղի տրված խեղումները շտկելու նկատառումներով:

Բոլորիս հայտնի է, որ անասնաբույծներիս մեծամեծ ուսուցիչ, ակադեմիկոս Ալ.Թամամշևն իր գիտական գործունեության սկզբում (և այնուհետև) կարևորում էր և առանձնահատուկ տեղ էր տալիս *տեղական (էնդեմիկ) ցեղերի գենոֆոնդի պահպանման խնդրին:*

Ինչ խոսք, միտքը բոլորովին էլ ուղղված չէ նրան, որ պետք է կառչել խաշնարածությամբ հանրահայտ (հնագույն) երկիր Հայաստանի տնայնացված ցածր մթերատու կենդանիների տեսակների (տավար, ոչխար, այծ, խոզ, հավ, ձի) պահպանմանը, այլ, ընդհակառակը, բարելավված՝ ներկայումս պահպանված (առկա) բարձրարժեք ցեղերի գենոֆոնդի պահպանմանը, որպիսիք են տավարի՝ կովկասյան, ոչխարի՝ կիսակոպտաբուրդ, խոզի՝ հայկական մսային, հավերի՝ երևանյան, ճագարի՝ հայկական մարդեր ցեղերը մեր հողի վրա և պայմաններին հարմարված գենոֆոնդի կենդանիներ են, որոնք Ալ.Թամամշևի դպրոցի շնորհաշատ գիտնականներ Ա.Ա.Ռուխկյանի, Ս.Կ.Կարապետյանի, Շ.Վ.Ժամակոչյանի, Ն.Գ.Ստեփանյանի, Մ.Ա.Առաքելյանի, Վ.Բ.Ոսկանյանի, Մ.Գ.Քարամյանի, Ա.Բ.Մանուչարովի, Գ.Կ.Ափինյանի, Մ.Գ.Բագրատյանի և այլոց մտքի, աշխատանքային ջանքերի վաստակն են հանդիսանում:

Այսօր հարցականի տակ է հիշյալ ցեղերի գենոֆոնդի պահպանման հարցը: Հետնորդներիս թերևս այդ է անհանգստացնում: Այդ ազգային խնդիր է և անհրաժեշտ է տեր լինել ազգովի՝ վերևից (իշխանավորներից) մինչ անասնապահ:

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ՀՀ գյուղատնտեսության նախարարության Անասնաբուծության զարգացման վարչության պետ, գյուղ. գիտությունների դոկտոր). –

«Չեմ ցանկանում կրկնել մեծ գիտնականի ստեղծագործական ուղուն վերաբերող, քիչ առաջ այստեղ հնչած խոսքերը, բայց և այնպես ուզում եմ նշել նրա մեծությունը՝ գիտական-գրական ժառանգության առումով: Ալ.Թամամշևը մի քանի տասնյակ մենագրությունների և գիտական աշխատանքների հեղինակ է, որոնք այժմ էլ խիստ համահունչ են ժամանակի պահանջներին և սեղանի գիրք են անասնաբույծ մասնագետներիս համար: Նրա ղեկավարած արշավախմբի առաջին հետազոտումը վերաբերում էր Ղազախի գավառի տավարին (1912 – 1914թթ.), որն արտացոլվեց «Ղազախի տավարն Անդրկովկասում» գրքում, որում տրվում է, բնութագրվում այդ ցեղախմբի տավարը և նախանշվում վերջինիս գիտականորեն հիմնավոր բարելավման ուղիները:

1926թ. Հայաստանում անցկացված արշավախմբային հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին «Հայկական ԽՍՀ-ում անասնապահության ուսումնասիրման նյութերը» գրքում, (1930թ.):

Իր երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները Ալ.Թամամշևն ամփոփել է հիմնարար մեկ այլ՝ «Հայաստանի տավարն անցյալում և ներկայումս» աշխատության մեջ (1947թ.): Այստեղ արտացոլվում են տեղական տավարի և շվեյցարական շվից և սիմենթալ ցեղերի տրամախաչումից ստացած խառնածինների համեմատական

(Շարունակությունը՝ 8-րդ էջում)

ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ



– Ուղեղը շատ արագ է աշխատում, վտանգի դեպքում, անմիջապես կողմնորոշվում է, արագ էլ խուսափում է վտանգից, – պատմում են նրանք, և ավելացնում, – Ռաֆիկը օժտված է զուտ օդաչուական հատկանիշներով, նա այդ ապացուցեց անցնելով արցախյան թոհ ու բոհով, բազմիցս վտանգելով իր կյանքը, հանդիպելով մահին ու խույս տալով նրանից: Իսկ Նորիկ Վարդանյանը ծանրակշիռ լրացնում է...

– Այսօր նա ուղղաթիռային էսկադրիլիայի բարեգործական ընկերության ղեկավարն է: Ավելի հարմար մարդ այդ պաշտոնում դժվար թե գտնվեր:

Այսօր: Բայց չէ որ «այսօրը» եկել է ու դարձել «այսօր» անցյալի բազմաթիվ «երեկներից»: Ռաֆիկը մեծ ռոմանտիկ է, նա շատ լավ գիտի այդ «երեկները», դրանք անմոռաց են...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ազգաբնակչության ծանր վիճակը: Տեսավ հայ մանուկների վախեցած, թախծոտ աչքերը ու սաստիկ ցավ զգաց: Ու ամեն մի թռիչքից հետո այդ ցավն ավելի էր խորանում: 27-ամյա երիտասարդի համար սկսվեց տառապանքի ու հերոսական մաքառումի մի նոր շրջան, նա հասկացավ, որ չի կարող անտարբեր ու հեռու մնալ արցախահայության համընդհանուր ցավից:Հասկացավ, որ իր կյանքը միայն իրեն չի պատկանում և այն դրվելու է իր ժողովրդի փրկության նժարին: ...Երբ ուղղաթիռը պտույտ գործելով այդ գյուղերի վրա վայրէջք էր կատարում, տեղ հասցնելով անհրաժեշտ բեռները, տառապած մարդկանց հայացքներում տեսնում էր հույսի շող: «Դուք մենակ չեք, ձեր թիկունքին Մայր ժողովուրդն է, նա ձեզ չի լքի», – անընդհատ մտածում էր Ռաֆիկը:

– Ուղղաթիռի հայտնվելը հոգեբանական մեծ նշանակություն ուներ: Դա նշանակում էր, որ հայրենիքը իրենց հետ է: Եվ այն, ինչ գրվում էր մամուլում, մենք տեսնում էինք սեփական աչքերով: Մենք արցախահայության անմխիթար վիճակի ականատեսներն էինք, – հիշում է նա:

Մեհրաբյանը 1988-ից մինչև 1990 թվականը ուղղաթիռային թռիչքներ է կատարել որպես երկրորդ օդաչու: 1990 թվականին լրացան հրամանատար դառնալու համար նախատեսված 2700 թռիչքային ժամերը: Ձեռք բերած փորձառությունը օգնեց քննությունները գերազանց հանձնելու: Նա նշանակվեց «Մ-8» ուղղաթիռի հրամանատար, որը այն ժամանակների համար, այնքան էլ դյուրին գործ չէր: «Խորհրդային իշխանության ժամանակ այնքան էլ հեշտ չէր հրամանատար դառնալ: Ապագա հրամանատարը պետք է ապացուցեր, որ ինքը պատրաստ է իր վրա վերցնելու և անձնակազմի, և ուղղաթիռի, և ուղևորների ու տեղափոխվող բեռների ողջ պատասխանատվությունը: Մի խոսքով՝ դա շատ բարդ ու դժվարին ուղի է...»:

– Բարեկամներ, խորհրդատուներ շատ ունեմ, բայց ուսուցիչս մեկն է եղել՝ Վլադիմիր Եֆիմի Կարատինսկին: Այդ փորձառու ռուս օդաչուն գերազանց գիտեր, թե ինչպես կարելի է թռչել լեռնային շրջաններում, ինչպես վարվել, վտանգը զգալու դեպքում: Նա իր փորձը հաղորդում էր մեզ՝ սովորեցնելով ամենակարևորը. ինչ հնարավորություններ ունի ուղղաթիռը, ինչ կարող է անել այն, և ինչ կարող է անել օդաչուն: Յուրաքանչյուր օդաչու թռչելու իր ուրույն ոճն ունի: Այսօր ես իմ թռիչքաոճն ունեմ, որը նման է Կարատինսկու ոճին: Նա եղավ ու մնում է իմ ամենասիրելի ուսուցիչը, և նրան եմ պարտական իմ հաջողված թռիչքների համար: Նա ինձ սովորեցրեց այնպես սիրել ուղղաթիռը ինչպես իրենց ժամանակին ինձ սովորեցրել էին նախորդ հրամանատարները, ես մինչև այսօր էլ այդպես եմ անում: Հիմնականն այն է, որ իմ պահանջները չգերազանցեն ուղղաթիռի հնարավորությունները: Ես հարգում եմ օդային կանոնները: Բայց արցախյան դաժան շրջափակման մեջ արդյո՞ք հնարավոր էր դրանք պահպանել:

1990 թվականից դառնալով ուղղաթիռի հրամանատար, Ռաֆիկը ուշի-ուշով հետևում էր այդ կանոններին և օր-օրի կատարելագործում իր գիտելիքները:

Ընկերները հիշում են, թե Ռաֆիկը օդում ղեկանիվի առջև, ինչպես է վերին աստիճանի զգոն, սառնասիրտ ու իմնքնավստահ վարում մեքենան: Վտանգի դեպքում երբեք խուճապի չի մատնվում:

...Հակառակորդը շրջափակելով Արցախը, ուզում էր խեղդել հայ ազգաբնակչության փրկության հույսը: Երբ զգաց, որ գործում է մեր օդային կապը, փորձում էր խափանել հայկական ինքնաթիռների և ուղղաթիռների մուտքը Լեռնային Ղարաբաղի տարածք: Նրանք գործի դրեցին "ստռա", "ստրելա" տիպի հրթիռները, վճռելով ամեն գնով ոչնչացնել հայկական ուղղաթիռներն ու ինքնաթիռները: Յուրաքանչյուր սպանված հայ օդաչուի համար մեծ «գլխագին» էր նշանակված:

– Իսկ ի՞նչ արինք մենք: Մենք սկսեցինք ուսումնասիրել այդ հրթիռները, նրանց հնարավորությունները: Միաժամանակ մտածում էինք՝ ինչպե՞ս պաշտպանվել և խույս տալ հրթիռներից: Մենք ամեն ինչ ծանրութեթև էինք անում: Շատ լավ էինք գիտակցում, թե ուր և ինչի համար էինք գնում, գիտեինք, որ յուրաքանչյուր թռիչք կարող է վերջինը լինել: Բայց նաև գիտեինք, թե ուղղաթիռներն ու ինքնաթիռները արցախահայության համար գոյատևման միակ ճանապարհն է, մենք սխալվելու իրավունք չունեինք և ճակատագրական սխալներից զերծ մնալու համար հարկավոր էր նաև շատ կարևոր մի հանգամանք. տեղանքի գերազանց ճանաչումը: Թշնամու ծուղակը չընկնելու համար պետք է մանրակրկիտ ուսումնասիրեինք նաև նրա տարածքը: Մենք հաճախ «փոխանակում» էինք մեր դիրքերը և մտածում, թե նման դեպքերում նրանք ինչպես կվարվեին, որտեղից կարող են հարվածել ուղղաթիռներին, գուշակում էինք նրանց գործողությունները: Մի խոսքով՝ ամեն ինչ քննարկվում ու ծրագրվում էր մեր բոլորիս կողմից: Արցախ էինք թռչում մի ճանապարհով, ետ էինք գալիս այլ ճանապարհով, – ժպտում է նա, և հետո մռայլվում:

– Այո՛, եթե չլիներ մեր հերոս օդաչուների ոչ միայն խիզախությունը, այլև բնատուր ճկուն խելքը, այսօր նրանցից շատերը մեր կողքին չէին լինի: Փա՜ռք Աստծո, որ մեծ մասն այսօր մեր կողքին է, նրանք արժանի են փառքի ու պատվի:

Ռաֆիկը շատ զգայուն ու սիրող հոգի ունի: Մինչև օրս էլ հուզմունքով ու արտասվալից աչքերով է պատմում զոհված ընկերների մասին: Աչքի առաջ է Ջանբուլադ Մուրադյանի ուղղաթիռի կորուստը: Ողջ անձնակազմը հաշվված վայրկյաններում վերածվեց բոցավառ խարույկի, սիրելի ընկերները, որոնց հետ այնքան ուրախ ու տխուր օրեր էր անցկացրել զոհվեցին ողբերգական մահով...

...Երկու ուղղաթիռները՝ իրենը և Ջանբուլադինը, պարտիզաններին զենք ու զինամթերք էին տարել Շահումյան: Վերադառնում էին: Մռավ սարի մոտ թշնամին սկսեց հրթիռակոծել ուղղաթիռները: Ռաֆիկը անմիջապես կողմնորոշվելով խույս տվեց, փրկեց անձնակազմը, ուղևորներին, իսկ նրա առջևից թռչող Ջանբուլադի մեքենային երկու հրթիռ հարվածեցին... Ի՞նչ կզգար նա: Այրվում էր ուղղաթիռը, այրվում էին նրա մեջ գտնվողները, իսկ նա ոչնչով չէր կարող օգնել...

– Շատ վիրավորներ ու զոհվածներ եմ տեղափոխել, շատ ծանր դեպքերի եմ ականատես եղել, սակայն Ջանբուլադենց հետ կատարվածը ցնցեց ինձ: Երկար ժամանակ ուշքի չէի գալիս: Մեջս և ցավ կար, և վախ: Հոգիս փոթորկվում էր այն մտքից, որ դա կարող էր և մեզ հետ պատահել: Չէ՞ որ մենք էլ հրաշքով փրկվեցինք: Բայց երևի ճիշտ էին գուշակել իմ ապագան: Ես հասկացա, որ ինձ պահպանում է ինչ-որ ուժ, որովհետև որքան էլ փորձառու լինես, նման պայմաններում ոչ ոք ապահովագրված չէ վերահաս վտանգից:

Ռաֆիկն աշխատում էի իր մասին շատ չպատմել: Այսօր դա այնքան էլ ընդունված չէ: Այո՛, ազատամարտի ծանր բեռը նաև նրանց ուսերին էր դրված, այո՛, թշնամու թեժ կրակագծերի վրայով էին թռչում՝ արցախահայությանը անհրաժեշտ բեռներ հասցնելով և այնտեղից դուրս բերելով հազարավոր անօգնականների, վիրավորների: Դա պե՛տք էր անել: Եվ արվում էր: Հիշո՞ւմ եք, վերևում հիշատակվեց օդային անխախտ օրենքների մասին: Այստեղ՝ թշնամու թիրախը չդառնալու համար, անհրաժեշտ բեռները տեղ հասցնելու համար օդաչուները խախտում էին գոյություն ունեցող կարգը, թռիչքային բոլոր օրենքները. թռչում էին ամպամած, անբարենպաստ եղանակներին, անընդհատ նոր ուղիներ փնտրում: Թռչում էին շատ ցածր, ձորերով, գրեթե ծառերի կատարներին քսվելով անցնում էին այնպիսի տեղանքներով, որտեղից թշնամին չէր սպասում, իսկ եթե՝ Աստված մի արասցե...

– Դա էլ էինք հաշվի առել, – մտախոհ պատմում է Ռաֆիկը, – գնալը մի բան է, վերադառնալը՝ այլ բան: Հայաստան վերադառնալիս միշտ մտածում էինք, որ եթե մեր ուղղաթիռը խոցվի թշնամուց, գոնե մեր տարածքում ընկնեինք, որպեսզի՝ մեր դիակները չպղծվեն: ...Լավ գիտեինք, թե ի՞նչ է նշանալկում գերի ընկնել... Ուստի որոշել էինք նման դեպքում անձնասպան լինել...

Հեշտ է արտասանվում, բայց ինչպիսի՞ դաժան սառնասրտություն ու քաջություն է պետք նման միտքը քոնը դարձնելու և ողջ պայքարի ընթացքում այդ մտքի հետ ապրելու:

– Իսկ կա՞ն «գաղտնիքներ», որոնք այսօր կարելի է «բացահայտել»:

– Չէ՛, կարելի է դրանց անվանել «հայտնի գաղտնիքներ»: Օրինակ. խորհրդային հատուկ նշանակության ջոկատները «Էրեբունի» օդանավակայանում փաստորեն ստուգում էին ուղևորներին և տարվող բեռները: Այդ ստուգումներից խուսափելու և ավելորդ ընդհարումների տեղիք չտալու, բեռները ավելի շուտ Արցախ հասցնելու համար օդաչուները հաճախ Արցախ էին թռչում Կամոյի և Վարդենիսի օդանավակայաններից: Մենք նրանցից խուսափելու շատ լուրջ պատճառ ունեինք: Մենք Լեռնային Ղարաբաղ, ոչ միայն սնունդ, հումանիտար օգնություն, դեղորայք էինք տանում, այլ նաև զինված ջոկատներ, զենք ու զինամթերք:

Նա ժպտում է, իսկ ես մտածում եմ հարցնե՞մ, թե՛ չհարցնեմ: Ռաֆիկը կարծես գուշակում է իմ հարցը.

– Շատ եմ սիրում... պարել: Եվ շատերի մոտ այն կարծիքը կա, որ ես սխալ մասնագիտություն եմ ընտրել ու հանդիսատեսին զրկել գերագույն հաճույքից, իսկ ինձ՝ այդ ամենախոսուն արվեստի ծառան լինելուց:

Իսկապես, նա շրջապատին հիացնում է իր թեթև, գեղեցիկ պարով: Նա պարում է ճկուն, զգացմունքով: Տարիներ առաջ Երևանից պարարվեստի գիտակներ էին եկել գյուղ, պարարվեստի ուսումնարանում սովորելու համար կադրեր ընտրելու: Ռաֆիկը աչքի ընկավ իր արտաքինով և գեղեցիկ պարով: Սակայն ո՛չ պարարվեստի ուսումնարան ընդունվելու, ո՛չ էլ պարի պետական անսամբլում պարելու հեռանկարը, ո՛չ ծնողների հորդորները չկարողացան Ռաֆիկին տարհամոզել: Նա անդավաճան սիրով նվիրված էր թռչելու իր երազանքին:

– Եվ հետո՝ շատ եմ սիրում Մեծ Թումանյանին, սիրում եմ նաև երգել, իհարկե մտքում, – ավելացնում է նա, – օրինակ՝ Մարտիկի երգը, միշտ երգում եմ, իհարկե, կիսաձայն, որ չլսեն, ձայնս այն չէ, իսկ պատանեկությանս տարիներին գյուղի տղաների հետ որքա՜ն արշավների եմ մասնակցել, մագլցել լեռնագագաթները, քնել բաց երկնքի տակ... մինչև հիմա էլ սիրում եմ ծուկ որսալ. ոնդհանրապես՝ որսորդությունը, սրընթաց վարել մոտոցիկլ, քանդել-հավաքել ավտոմեքենաս, ժամադրվել և... ուշանալ...

...Բաց երկնքում նա բոլորովին ուրիշ մարդ է՝ ռոմանտիկ ճախրանքին սիրահարված...

– Իմ մեծագույն սերը ուղղաթիռն է: Երբ ճախրում եմ երկնքում, վերանում, կտրվում եմ աշխարհից, հոգսերից: Ամեն ինչ բացվում է դեմդ, դու ազատ ես, կարող ես թռչել, ճախրել ուր ուզում, ինչպես ուզում ես, իջնել որտեղ ուզում ես, և դու տեր ես: Այլ բան է, երբ գետնից հետևում ես թռիչքին, այլ է, երբ ինքդ ես թռչում: Ուղղաթիռը քոնն է, այն քեզ է ենթարկվում, ինքդ էլ ծուլվում ես նրան, հաղորդելով այդ անշունչ մարմնին քո զգացմունքները, քեզ զգում ես երկնքի տեր: Դա օդաչուի ամենամեծ ռոմանտիկան է, դա գերագույն վարձատրությունն է քո բոլոր կորուստների...

Այսպիսին է երկնքի ու ուղղաթիռի հետ կապված նրա՝ կարելի է ասել, պատանեկան փիլիսոփայությունը: Բայց կան արմատներ, որոնք շատ խորն են ու կապված են հարազատ գյուղին:

– Ես չգիտեմ, – բարձրաձայն մտածում է նա, – կա՞ ավելի քաղցր ու հարազատ բան, քան մշտապես իր գիրկը կանչող քո ծննդավայրը, որին անդառնալիորեն կապված ես, որտեղ անցել են քո մանկության և պատանեկության ամենաերջանիկ օրերը, որտեղ առաջին քայլերն ես արել և առաջին անգամ սիրահարվել: Ամեն անգամ գյուղ գնալն ինձ համար տոն է: Երբ գյուղ եմ գնում, մեծ սիրով փորում եմ հողը, ծառ տնկում, մշակում, հավաքում բերք ու բարիքը:

Գյուղի նկատմամբ մեծ սերը նա փոխանցել է իր երեխաներին, որոնք այսօր բոլոր հարցերում իրենց հոր արժանավոր զավակներն են:

Եվ բացահայտ «մի գաղտնիք» ևս: Այն ծանր տարիներին, Արցախ ուղևորվելուց առաջ Ռաֆիկ Մեհրաբյանը՝ այդ բազմափորձ ու խիզախ մարդը, միշտ մի պտույտ էր կատարում հարազատ գյուղի վրա:

Մենք չենք հարցնում՝ դա ողջո՞ւյն էր, թե հրաժեշտ, բայց բոլորը վերև էին նայում ու թափահարում ձեռքերը.

– Բարի՛ երթ...



Տարեցտարի մեծանում է ռոբոտների կիրառությունը ոչ միայն արտադրությունում, այլև կենցաղում: Եվ այդ հարցում Ճապոնիան շարունակում է պահպանել առաջնությունը:

Ընտանիքի տղամարդը, այսպես են Ճապոնիայում անվանում Հոնդա ֆիրմայի պատրաստած ռոբոտը: Մեկ մետր քսան սանտիմետր հասակ ունեցող այս «տղամարդը» պատրաստ է օգնել տանը ընտանեկան բոլոր հոգսերում: Իսկ ահա այս մեկը՝ մանկական խաղալիք չէ. Սոնի ֆիրմայի ինժեներները պատրաստել են այս շնիկ-ռոբոտը, որը ոչ միայն թռչկոտում ու խաղում է երեխաների հետ, այլև պաշտպանում է բակը:

ԶԱՐԿԵՐԱԿ...

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը շարունակում է քննարկել ակադեմիական գիտական հաստատությունների հաշվետվությունները՝ ինստիտուտների 2000 – 2001 թվականների գիտական, գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին: Ինչպես արդեն նշել ենք, այդ քննարկումները նպատակ ունեն ոչ միայն գնահատական տալ գիտական հաստատությունների գործունեությանը, այլև վեր հանել թերությունները, օգնել և կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ գիտական ինստիտուտների գործունեությունը ավելի նպատակային և արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

Նախագահության հերթական նիստում լսվեց ակադեմիայի Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հաշվետվությունը՝ 2000 – 2001 թվականների գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին (զեկուցողներ՝ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գևորգ Ջահուկյան, թղթակից-անդամ Սևակ Արզումանյան): Նախագահությունը հավանություն տվեց ինստիտուտի գործունեությանը: Ծավալված բուռն ու շահագրգիռ մտքերի փոխանակության, հայոց լեզվի մաքրության ու պահպանության ուղղությամբ արված կոնկրետ առաջարկություններից ելնելով՝ ընդունեց սկզբունքային որոշում:

Թերթի այս համարում տպագրում ենք ակադեմիկոս Սերգեյ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ հոդվածը, որը լիովին համահունչ է քննարկման ոգուն (7-րդ էջ):

Հերթական նիստում ՀՀ ԳԱԱ նախագահությունը լսեց Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվությունը՝ 2000 – 2001 թվականների գիտական, գիտակազմակերպական գործունեության մասին (զեկուցողներ՝ ինստիտուտի տնօրեն Ռաֆայել Հովհաննիսյան, Հիդրոպոնիկայի ինստիտուտի տնօրեն Ստեփան Մայրապետյան):

ԳԱԱ նախագահությունը հավանություն տվեց Հիդրոէկոլոգիայի ինստիտուտի գիտական, գիտակազմակերպական գործունեությանը: Քննարկման, զեկուցումների, ելույթների և առաջարկությունների էությանը համահունչ ակադեմիայի նախագահությունը ընդունեց որոշում:

Մեր թերթի հաջորդ համարում հանգամանորեն կանդրադառնանք այդ որոշման բովանդակությանը:

Նույն նիստում նախագահությունը որոշեց կիրառական նշանակություն ունեցող գիտական մշակումների ներդրման աշխատանքները առավել նպատակային և արդյունավետ դարձնելու նպատակով ՀՀ ԳԱԱ նախագահությանն առընթեր ստեղծել հանձնաժողով: Նախագահությունը հաստատեց հանձնաժողովի կազմը (նախագահ՝ ակադեմիայի փոխպրեզիդենտ, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյան):

ՔԻՄԻԱ, ՈՐԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔԵՐ Է ՓՐԿՈՒՄ

ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Մնջոյանի անվ. Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի 2000 – 2001թթ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքների մասին նախագահությանը զեկուցեցին ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն Բ.Ղարիբջանյանը և ստուգող հանձնաժողովի նախագահ, ակադեմիկոս Ա.Ավետիսյանը: Նախագահությունը նշեց, որ Ա.Լ.Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում կատարվում են ժամանակակից հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների սինթեզման, բժշկակենսաբանական ուսումնասիրության բնագավառներում:

Գիտական այս ուղղությունն ի սկզբանե ունեցել է գործնական նպատակաուղղվածություն, որի համար հիմք է ծառայում սինթեզված միացությունների քիմիական կառույցի ու նրանց կենսաբանական ակտիվության մեջ եղած կապի օրինաչափությունների բացահայտումը և նպատակային սինթեզների միջոցով նոր դեղամիջոցների ստեղծումը: Հաշվետու ժամանակաշրջանում ինստիտուտը կատարել է 17 գիտական թեմա, որոնցից 15-ը ֆինանսավորվել են պետական բյուջեից, իսկ 2-ը՝ արտասահմանյան դրամաշնորհներից:

Հետազոտությունների արդյունքները հրատարակվել են 89 հոդվածի տեսքով, որոնցից 58-ը արտասահմանյան մամուլում: Երկու գիտաշխատող պաշտպանել են թեկնածուական թեզ: Ինստիտուտի փորձնական արտադրությունում ու նրա բազայի վրա ստեղծված Հայ-Ամերիկա-Գերմանական համատեղ դեղագործական ձեռնարկությունում արտադրվել են ինչպես ինստիտուտում ստեղծված, այնպես էլ հայտնի մի շարք դեղամիջոցներ: Ինստիտուտում N, S, O պարունակող հետերոցիկլիկ միացությունների սինթեզի լաբորատորիայի ընթացիկ տարվա գիտական արդյունքները զեկուցվել են Միջազգային գիտաժողովում և արժանացել ոսկե մեդալի ու հատուկ դիպլոմի:

Հակաուռուցքային միացությունների լաբորատորիայի սինթեզի ղեկավար Ռ.Մելիք-Օհանջանյանի և նրա աշխատակից Վ.Խաչատրյանի 2,4 բիստրիմիթիլ սիլիլօքսի պիրիմիդինների ածանցյալների նկատմամբ O-նիտրֆենոլի ընտրողական դեսիլիլացնող հատկությունը գյուտերի և հայտնագործությունների Միջազգային ակադեմիայի կողմից ճանաչված է ու գրանցված է որպես հայտնագործություն:

Ինստիտուտը գիտական կապերով համագործակցում է Ռուսաստանի, Ճապոնիայի, Գերմանիայի, Իսրայելի և Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր գիտական օջախների հետ: Միջազգային գիտական ծրագրերի մասնակցության ոլորտում ինստիտուտը ունի հաջողություններ և ստացել է համապատասխան դրամաշնորհներ: Ինստիտուտում մեծ ուշադրություն է դարձվում հանրապետության համար սնհրաժեշտ երիտասարդ դեղագետ մասնագետների պատրաստման գործին: Դրա հետ մեկտեղ ինստիտուտում կան որոշ թերություններ՝

1. Խիստ դանդաղ են իրականացվում ընտրված ակտիվ միացությունների նախակլինիկական փորձարկումները, որի պատճառը բազային ֆինանսավորման բացակայությունն է:

2. Անմխիթար վիճակում են ինստիտուտի փորձնական արտադրության և վիվարիումի շենքերը, որոնք կարիք ունեն կապիտալ վերանորոգման:

3.Ինստիտուտում զգացվում է երիտասարդ գիտաշխատողների պակաս:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում է՝

1. Հավանություն տալ ՀՀ ԳԱԱ Ա.Լ.Մնջոյանի անվ. ՆՕՔԻ 2000 – 2001թթ. գործունեությանը:

2. Ա.Լ.Մնջոյանի անվ. ՆՕՔԻ առաջնային ուղղությունը համարել նոր, ֆիզիոլոգիապես ակտիվ միացությունների սինթեզը, նրանց բազմակողմանի կենսաբանական ուսումնասիրությունը, քիմիական կառույց-կենսաբանական ակտիվություն կապի օրինաչափությունների բացահայտումը և նոր դեղամիջոցների ստեղծումը:

3. Ինստիտուտի ղեկավարությանը հանձնարարել ընդարձակել համագործակցությունը արտասահմանյան տարբեր կազմակերպությունների հետ՝ սեփական մշակումների համատեղ արտադրություն կազմակերպելու առաջարկով:

Ուղիներ որոնել արագացնելու ինստիտուտի նախակլինիկական փուլի աստիճանի հասցված մշակումների ներդրման աշխատանքները:

Դիմել ՀՀ կառավարությանը ապահովելու ինստիտուտի նախակլինիկական հետազոտությունների բաժինը բազային ֆինանսավորմամբ: Այդ հնարավորություն կստեղծի ոչ միայն ավարտին հասցնելու ներդրողական աշխատանքները, այլև կնպաստի հանրապետության այլ հաստատությունների կողմից սինթեզված կենսաբանորեն ակտիվ միացությունների բժշկա-կենսաբանական հետազոտությունների կազմակերպմանը:

Ինստիտուտի գիտական, արտադրական աշխատանքների մասին առաջիկայում մեր թերթի էջերում կպատմի Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տնօրեն, բժշկական գիտությունների դոկտոր Բ.Ղարիբջանյանը:



Եգիպտոս, Գիզա... Քեոփսի բուրգը: Աշխարհի 7 հրաշալիքների մասին կարդացեք 8-րդ էջում:

ԸՆԴԵՐՔԸ ՀԱՐՈՒՍՏ Է, ԻՍԿ Ե՞ՐԲ ՊԵՏՔ Է ՀԱՐՍՏԱՆԱ ԵՐԿԻՐԸ



(Սկիզբը NN 1 – 3-ում)

Հայաստանում առկա են նաև բուն ոսկու և ոսկի-բազմամետաղային բազմաթիվ հանքավայր ու հանքաերևակումներ, որոնցից մանրակրկիտ հետախուզված ու գնահատվածները վեցն են՝ Սոտքի, Մեղրաձորի, Շահումյանի, Թեյ-Լիճքվազի, Ազատեկի և Արմանիսի հանքավայրերը: ԽՍՀՄ-ի օրոք շահագործվում էին նշվածներից երկուսը՝ Սոտքի և Մեղրաձորի հանքավայրերը, որից 4-ը մեկի հարաբերությամբ կազմվում էր բովախառնուրդ և ուղարկվում Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա՝ ազնիվ մետաղները կորզելու համար: Այժմ Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում («Արարատի ոսկու կորզման ընկերություն (ACBC)»):

Կանադա-հայկական համատեղ ձեռնարկության կողմից վերամշակման են ենթարկվում նախկինում մշակված հանքաքարերի «թափոնապոչերը», որի յուրաքանչյուր տոննայից կորզվում է կես գրամ ոսկի (թափոնապոչերում ոսկու պարունակությունը կազմում է 0,9-1 գրամ/տոննա): Միևնույն ժամանակ կատարվում են նախապատրաստական աշխատանքներ նշված երկու հանքավայրերի շահագործման՝ հանքաքարերի արդյունահանման և Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում վերամշակման ենթարկելու համար:

Կանադա-հայկական համատեղ ձեռնարկության գլխավոր տնօրեն պարոն Ջոն Լյուինսի «Սնարք» գործակալությանը (տես «Գործարար շաբաթ» թերթի 3 նոյեմբերի 1998թ. համարը) և «Գոլոս Արմենիի» թերթի (11 մայիսի 1999թ.) թղթակցին տված հարցազրույցից պարզվում է, որ համատեղ ձեռնարկությունը նշված երկու հանքավայրերից պատրաստվում է արդյունահանել 2-ից 2,5 մլն տ հանքաքար (միջինը, բնականաբար, պետք է կազմի 2,25 մլն տ), որից պետք է կորզվի մոտ 5000 կգ ոսկի: Այս հանգամանքն է, որ մեզ տարակուսանքի մեջ է գցել. ինչպե՞ս կարող է պատահել, որ 6,19գ/տ ոսկի պարունակող «ապրանքային» հանքաքարից կորզվի միայն դրա մեկ երրորդ մասը: Դա լինել չի կարող: Հետևապես, պարոն Ջոն Լյուինսի ինֆորմացիան իր մեջ զգալի խաբեություն է պարունակում (հիմնավորումը տես Հ.Ս.Ավագյանի հոդվածը («Հայաստան», թիվ 65 և 66՝ 26 և 27 մայիսի 1999թ.)): Մեր հանքավայրերը պետք է մշակենք մենք ինքներս և ինքներս էլ լինենք մեր հարստության տերը: Հարկավոր է խոչընդոտել և իսպառ վերացնել մեր երկրի հարստության թալանը:

Հայաստանում առկա են երկաթի հետախուզված երկու հանքավայրեր՝ արդյունաբերական կատեգորիաներով գնահատված պաշարներով և երեք՝ նախնական գնահատված և մեծ հեռանկարներ խոստացող հանքաերևակումներ: Հետախուզված հանքավայրերի ընդհանուր պաշարները կազմում են մոտ 300 մլն տ, իսկ բոլոր հինգ հանքավայր-հանքաերևակումների հեռանկարային ռեսուրսները՝ 2,7 մլրդ տ:

Հրազդանի հետախուզված հանքավայրի պաշարները կազմում են 50,1 մլն տ, լուծվող երկաթի 32 տոկոս պարունակությամբ: Հանքաքարերը բնականից լեգիրված են, պարունակում են արժեքավոր՝ ցերիումի և իտրիումի խմբերի հազվագյուտ հողատարրեր, ինչպես նաև ցրված հազվագյուտ տարրեր՝ գերմանիում, գալիում, թալիում, նիոբիում, տանտալ, ցիրկոնիում: Հանքավայրը գտնվում է շահագործման համար նպաստավոր երկրաբանական, աշխարհագրական և լեռնատեխնիկական պայմաններում:

Աբովյանի հանքավայրի հաստատված պաշարները կազմում են 243,8 մլն տ, 28 տոկոս լուծվող երկաթի պարունակությամբ և հանքաքարերը պարունակում են ցերիումի և իտրիումի խմբերի հազվագյուտ հողատարրեր:

Հայաստանի երկաթի հանքաքարերի համար բնորոշ են վնասակար խառնուրդների ցածր պարունակություններն ու արժեքավոր հազվագյուտ տարրերի ու հողատարրերի առկայությունը, որոնք մետաղին տալիս են բնականից լեգիրված հատկություն: Սակայն այդ հանքավայրերից և ոչ մեկը դեռևս չի շահագործվում:

Կասկածից վեր է, որ մոտ ապագայում ծագելու է Հայաստանում սև մետալուրգիայի զարգացման անհրաժեշտություն՝ երկաթի արտադրանքներով հանրապետության հեռանկարային պահանջները բավարարելու համար: Տարեկան 9մլն տ արդյունահանվող երկաթաքարերից, ամենափոքր՝ 26 տոկոս լուծվող երկաթի պարունակության և 15 տոկոս երկաթի կորստի դեպքում, կարելի կլինի ստանալ մոտ 2 մլն տ մաքուր երկաթ, որի 50 տոկոսը կարող է բավարարել հանրապետության հարաճուն պահանջները, իսկ մյուս 50 տոկոսը՝ արտահանել հարևան երկրներ:

Բ. ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԸ

Շատ տարածվածության և խոշորագույն պաշարների ու ռեսուրսների հետ միասին, որոշակի օգտակար հանածոների գծով Հայաստանը մենաշնորհային է համարվում ոչ միայն նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հանդեպ, այլև շրջապատի շատ ու շատ այլ երկրների, ընդհուպ մինչև աշխարհի երկրների 90 տոկոսի: Այդպիսի օգտակար հանածոների թվին են պատկանում պեմզաները օբսիդիանները, դիատոմիտները, ալկալիական բենթոնիտները (Սարիգյուղի հանքավայր), տուֆերը, մոլիբդենը և այլն: Հայաստանի օգտակար հանածոներից (հատկապես ոչ մետաղական) մի քանիսն էլ համարվում են եզակի և իրենց որակով աշխարհում ճանաչվել են լավագույնները: Սրանց թվին են պատկանում՝ օբսիդիանները, դիատոմիտները և պեռլիտները:

Հայկական օբսիդիաններ, դեռևս 70 -ական թվականներին, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն էին առաքվում կիլոգրամը 3-4-5 դոլարով (տոննան 3-5 հազար դոլարով): Հայատանի Ջրաձորի հանքավայրի դիատոմիտներից Իտալիայում պատրաստված զտափոշիները ճանաչվել են լավագույններն աշխարհում և առաքվում էին աշխարհի (հիմնականում Եվրոպայի) մի քանի տասնյակ երկրներ: Երևանի քիմռեակտիվների արտադրական միավորման կողմից, լաբորատոր պայմաններում նույն դիատոմիտներից արտադրվող գազային քրոմատոգրակիրը՝ «պորոքրոմը», իր քրոմատոգրային հատկություններով գերազանցում էր արտասահմանյան լավագույն նմանակներին՝ ԱՄՆ-ի «Ջոնս Մենվիլ» ֆիրմայի կողմից թողարկվող «Քրոմոօդիտին»: Ջրաձորի հանքավայրի դիատոմիտներից պատրաստված զտափոշիները միջազգային շուկայում կարող են գնահատվել 1000-ից 1100 դոլ. մեկ տոննան, որից ձեռնարկության շահույթը կարող է կազմել 60 – 70 տոկոսը:

Հայտնի է, որ աշխարհի մեկ տասնյակ երկրներ ունեն պեռլիտների զգալի ռեսուրսներ, որոնցից ամենախոշորները գտնվում են Թուրքիայում, սակայն դրանք բոլորն էլ իրենց որակով զգալի զիջում են Հայաստանի Արագածի հանքավայրի պեռլիտներին: Ասենք, որ «Շինանյութեր 71» միջազգային ցուցահանդեսում Հայաստանի պեռլիտները (Արագածի հանքավայր) ճանաչվել են լավագույններն աշխարհում:

Նկատի ունենալով Արագածի հանքավայրի պեռլիտների որակական բարձր հատկանիշները, զտափոշիների արտադրության իտալական «Դիկոլիտ» ֆիրման (հավանաբար ամերիկյան նույնանուն ֆիրմայի դուստր ձեռնարկությունը), ավելի քան 25 տարի անընդմեջ (ԽՍՀՄ-ի օրոք), գնում էր Հայաստանի պեռլիտահումքը, որից պատրաստված զտափոշին առաքվում էր աշխարհի մի քանի տասնյակ երկրներ, այդ թվում նաև նախկին ԽՍՀՄ և Հայաստան: Եվ, պատահական չէ, որ այսօր «Արագածպեռլիտ» ձեռնարկության բաժնետոմսերի ողջ փաթեթը՝ 1,4մլն ԱՄՆ դոլարով, ձեռք է բերել ԱՄՆ-ի «Դիկոլիտ» ֆիրման և մեր որակյալ պեռլիտները փշրման և տեսակավորման ենթարկելուց հետո, տոննան 16 դոլար գնահատված, փոխադրվում է Բելգիա:

Երևանի քարերի և սիլիկատների գիտահետազոտական, ինչպես նաև ԳԱԱ ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտներում կատարվող ուսումնասիրությունները պարզել են, որ Հայաստանի պեռլիտներից կարելի է ստանալ ավելի քան 110 տեսակի արտադրանքներ. բարձրորակ տեսակավոր և շինարարական ապակի, նատրիումի մետասիլիկատ, սինթետիկ ցեոլիտ, ապակեթելեր, փրփրապեռլիտ, ապակե պլաստիկ նյութեր, ջերմա և ձայնամեկուսիչ արտադրանքներ, ֆիլտրող նյութեր (զտափոշիներ), սիտալներ և այլն:

Հաստատված է նաև, որ պեռլիտները ծառայում են որպես պոլիմերային արտադրանքների որակյալ լցանյութ, կատալիզատորի կրողներ, ջրանակի բաղադրամաս և այլն:

Այժմ մեր այս շատ կարևոր հումքը, բարձրորակ պեռլիտները, որոնք արդյունահանվում են ամերիկյան «Դիկոլիտ» ֆիրմայի կողմից, Հայաստանին բերում են շատ աննշան եկամուտներ, այսինքն՝ Հայաստանի համար ծառայում են շատ ցածր արդյունավետությամբ: Փշրված ու տեսակավորված պեռլիտահումքը դուրս է տարվում մեր հանրապետությունից մեկ տոննան 16 դոլարով, այն դեպքում, երբ նշված ֆիրման ԱՄՆ-ի շատ ավելի ցածրորակ պեռլիտներից պատրաստած արտադրանքները վաճառում է տասնապատիկ ու հարյուրապատիկ ավելի բարձր գներով՝ փքեցված պեռլիտների մեկ տոննան՝ 530 – 570 դոլարով, զտափոշիներինը՝ 620 ֆունտ ստեռլինգով (մոտ 1050 դոլարով), իսկ փշրված պեռլիտահումքը՝ 200 – 260 ֆունտ ստեռլինգով (340 – 440դոլար):

Հայաստանի համար տասնապատիկ անգամ շահավետ կլիներ, եթե մեր որակյալ պեռլիտահումքի վրա տեղում կառուցվեր զտափոշիների, փքեցված պեռլիտների, սիտալների և այլ՝ որակյալ ու մեծ պահանջարկ ունեցող արտադրանքների արդյունաբերության համատեղ ձեռնարկություններ, որոնք հագեցած լինեին առաջավոր երկրների ժամանակակից տեխնիկայով և մեր ու նրանց նորագույն տեխնոլոգիաներով: Այս դեպքում և հանրապետության եկամուտները մեծ կլինեին և ժողովրդի զբաղվածությունը բարձր կլիներ:

Այստեղ հարկավոր է նաև հաշվի առնել, որ մեր բնական հարստությունները օտարներին տալով մենք խաթարում ենք մեր երկրի տնտեսական անվտանգությունը:

Կարևորագույն օգտակար հանածոներից են պեմզաները, որոնց պաշարներով Հայաստանը զբաղեցնում է առաջնակարգ (եթե ոչ առաջինը) տեղերից մեկն աշխարհում: Պեմզաներն օգտագործվում են որպես կատալիզատորի կրողներ և որակյալ հղկանյութ փափուկ և միջին կարծրության փայտյա, մետաղյա և ապակյա իրերի մակերեսները հղկելու համար, ռետինատեխնիկական իրերի և պլաստմասսաների արտադրության համար, կերամիկական, էլեկտրավակուումային, պոլիգրաֆիական, սարքաշինական, ապակու, ցեմենտի արդյունաբերություններում, գյուղատնտեսության մեջ՝ հողի կառուցվածքը բարելավելու, ջերմա և ձայնամեկուսիչ նյութեր պատրաստելու համար և այլն: Հանդիսանալով թթու կազմի հրաբխածին ապարների ապակեփրփուր պեմզաները իրենց կարծրության և կլանող-մաքրող հատկությունների շնորհիվ ընդարձակ կիրառություն են գտել կենցաղային քիմիայի արդյունաբերության մեջ՝ մաքրող մածուկների արտադրության գործում: «Հայկենցաղքիմիա» արտադրական միավորումը, որը մի ժամանակ (80-ականներին) լայնորեն օգտագործում էր Նորաշենի հանքավայրի (Ապարանի շրջան) պեմզաները, այժմ պեմզափոշիներ չունենալու պատճառով օգտագործում է կավային դիատոմիտներ (կիզելգուր), որի մեկ տոննան ձեռք է բերում 300 դոլարով: Պեմզափոշիների մեծ պահանջարկ ունեն նախկին ԽՍՀՄ հանրապետությունները, հատկապես Ռուսաստանը (մոտ 15 հազ.տ):

Մեր նախնական հաշվարկները ցույց են տալիս, որ 30 հազ. տ պեմզափոշու արտադրության ձեռնարկությունը, արտադրանքը ամենաէժան գներով՝ 100 դոլարով, վաճառելու դեպքում, կարող է տարեկան ունենալ ավելի քան 3 մլն դոլարի շահույթ:

Հրաչիկ ԱՎԱԳՅԱՆ
Երկրահանքաբանական գիտությունների դոկտոր

(Շարունակելի)

ԼԵԶՎԻ ՀԱՐՑԸ ԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Է ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՆԵԼ ՊԵՏՔ ՉԷ

ԱՊԱՀՈՎԵՆՔ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

(ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՍԵՐԳԵՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՅԻՍԻ 15-Ի ՆԻՍՏՈՒՄ):

Գիտությունը, հատկապես ակադեմիական գիտությունը, չի կարող զարգանալ առանց հիմնարար ուսումնասիրությունների, մյուս կողմից հասարակական կյանքը, երկիրը, չեն կարող ժամանակի հետ համընթաց առաջ գնալ առանց կիրառական գիտությունների, առանց ուսումնասիրությունների կիրառական արդյունքների ներդրման: Սա վերաբերում է գիտության բոլոր բնագավառներին, բնականաբար նաև հումանիտար գիտություններին, այդ թվում լեզվաբանությանը: Մեր երկրի զարգացման հատկապես ներկա շրջանում ամբողջ սրությամբ է զգացվում գիտությունը կյանքին ծառայեցնելու կարիքը, բայց և գիտության դերը երբեք այնքան անտեսված չի եղել, որքան այժմ: Մեր կյանքի ու գործունեության մի շարք բնագավառներում եղած թերությունները հիմնականում պայմանավորված են գիտության տվյալ բնագավառի նկատմամբ այդ անհասկանալի անտարբերությամբ, իսկ երբեմն էլ արհամարհանքով: Վերջին երևույթի բնորոշ օրինակ է հայոց լեզվի դպրոցական ուսուցումը: Այս բնագավառում բացահայտ են մեր կորուստները թե՛ գիտական-ուսումնական և թե՛ մեթոդական-մանկավարժական առումներով: Դպրոցական գործի ղեկավարները փոխվում են, քաղաքականությունը մնում է նույնը: Եթե տարիներ առաջ ի հայտ եկած ոչ անհայտ «գիրք-տետրերը» մամուլը պիտանի էր համարում գոնե թերզարգացած երեխաներին զբաղեցնելու համար, ապա այժմ գործածության մեջ դրվածները նույն մամուլի հրապարակումները գնահատում են «խոտան», «չարիք», «Զգուշացե՛ք, նոր դասագրքեր են» և նման որակումներով: Իսկ Լոռու մարզի ուսուցիչների խորհրդակցության արդյունքները, ուսուցիչների վերաբերմունքը, որքան էլ մարզի ղեկավարությունը փորձեց մեղմացնել, այնուամենայնիվ «Հայաստանի Հանրապետություն» թերթը իր հրապարակման մեջ գնահատեց «Լոռու մարզի ուսուցիչները չեն ընդունում նոր դասագրքերը» վերնագրով: Ահա թե ինչի կարող է հանգեցնել գիտական մտքի և մանկավարժական-մեթոդական արժեքների արհամարհումը մայրենի լեզվի ուսուցման բնագավառում:

Հայոց լեզվի հիշյալ դասագրքերի հարցում ինքնարդարացման համար արվող այն հայտարարությունը, թե դա մասնավոր թերացում է, մարդկանց թյուրիմացության մեջ գցելու փորձ է: Այդ «մասնավոր թերացմանը» նախորդող ու հաջորդող, այլև զուգահեռ կատարվող քայլերը կասկած չեն թողնում, որ մենք գործ ունենք որոշակիորեն հակագիտական, հակամանկավարժական ուղղվածություն ունեցող գործելակերպի հետ: Միայն հիշեցնեմ, որ նշված և այժմ պաշտոնապես գործող դասագրքերը անմիջապես հաջորդել են Բլեյանի օրոք գործող «գիրք-տետրերին»: Իսկ այժմ հայոց լեզվի գիտամանկավարժական հիմունքներով ուսուցման դեմ պայքարն ավելի խորքային բնույթ է կրում: Որպես «դպրոցի բարեփոխման» հաջորդ փուլ դպրոցի գծով փոխնախարարի ղեկավարությամբ գործնական քայլեր են կատարվում (այդ թվում նաև «գիտափորձ») սահմանափակելու հայոց լեզվի իրավունքները դպրոցական ուսուցման գործում: Փոխնախարարը պնդում է, որ հայերենը՝ որպես դպրոցական ուսուցման միակ լեզու, «միանգամայն անբավարար է», ուստի դպրոցական ուսուցման իրավունքը պետք է վերապահել ոչ թե հայերենին՝ առանձին վերցրած, այլ նրա հետ միասին ու միաժամանակ նաև արտասահմանյան մեկ կամ մի քանի լեզվի: Այս ծրագրի իրագործումով, որը ոմանք ուզում են ներկայացնել որպես հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի հարց, իրականում, կավարտվի հայոց ազգային դպրոցի գոյությունը մեր անկախ ազգային հանրապետությունում, և կսկսվի նոր տիպի՝ ապազգային դպրոցի շրջան: Մեր վարչական մարմինների, հատկապես միջին օղակներում, հաճախ է առիթ լինում հիմնավորելու, որ այդ նույն անհրաժեշտությունն առկա է մեր երկրի հանրակրթական դպրոցի ղեկավարման գործում:

Ազգային շահերի տեսանկյունով հատուկ քննարկման արժանի այս հարցի վրա տվյալ դեպքում ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն առումով, թե ինչի կարող է հանգեցնել այն գործելակերպը, երբ խզվում է ճշմարիտ համագործակցությունը ակադեմիական ինստիտուտի և համապատասխան պաշտոնական մարմնի՝ տվյալ դեպքում նախարարության միջև:

Անհրաժեշտ է վերականգնել լեզվի ինստիտուտի՝ որպես ակադեմիական հաստատության, պատշաճ համագործակցությունը կրթության և գիտության նախարարության հետ, գործնական քայլերով նպաստել ապահովելու համար ինստիտուտի առաջատար դերը դպրոցական դասագրքերի, ձեռնարկների ստեղծման, նախարարությանը գիտամեթոդական օժանդակություն ցույց տալու հարցերում: Ինստիտուտն իրեն պետք է մասնագիտական և բարոյական առումով պատասխանատու զգա նպաստելու համար մեր մայրենի պետական լեզվի, նրա ուսուցման, դպրոցի նվաճումները պահպանելու և նրանց զարգացման շարունակությունն ապահովելու գործում:

Ես դպրոցի խնդրի վրա երկար կանգ առա, որովհետև այսօրվա դպրոցից է կախված մեր վաղվա քաղաքացիների մտավոր ու հոգևոր մակարդակը, մեր բարձրագույն կրթության և գիտության ապագան: Հանրակրթական դպրոցը, բարձրագույն կրթությունը և գիտությունը ամբողջական համակարգ են կազմում, որի շղթայի ամրությունը պայմանավորված է այդ երեք օղակներից յուրաքանչյուրի ամրությամբ: Մենք այս աշխարհատարածքում պարտավոր ենք ապահովել գիտության բարձր մակարդակ, որի համար բավարար հիմք կարող է լինել կատարյալ դպրոցը: Հայկական ազգային դպրոցի դարավոր և մասնավորապես վերջին տասնամյակների նվաճումները մեր ազգային արժեքներն են, որոնք պետք է պահպանվեն խնամքով և, իհարկե, զարգացվեն, արդիականացվեն: Ճշմարիտ զարգացում կարելի է ապահովել եղած արժեքների պահպանման հիման վրա:

Առաջիկայում մեր կարևոր խնդիրներից մեկը, թերևս ամենակարևորը՝ Հայաստան-Սփյուռք համաժողովին մեր մասնակցելն է, նրա աշխատանքների հաջողությանը նպաստելը: Առանձնապես կարևոր է Հայաստանի և Սփյուռքի միասնության, միաբանության ապահովումը: Սա շատ կարևոր և նուրբ հարց է, և հարցի նրբությունը մենք պետք է հաշվի առնենք: Հայ ժողովրդի մեզ հավասարապես հարազատ արևելահայ և արևմտահայ հատվածների որոշ մտավորականներ սուր քննարկման առարկա են դարձնում ուղղագրության հարցը: Ես բնական ու հասկանալի եմ համարում ակադեմիկոս Գալուստ Գալոյանի անհանգստությունը ուղղագրության վերաբերյալ մեր դիրքորոշման կապակցությամբ, եթե հարցը բարձրացվի:

Իհարկե, լավ կլիներ, որ մենք հնարավոր, ենթադրվող որոշ հարցերի վերաբերյալ ունենայինք մեր միասնական պատասխանը, վերաբերմունքը: Այնուամենայնիվ, իմ կարծիքով մեր դիրքորոշումը այդ հարցի վերաբերյալ պետք է լինի այսպիսին: Համահայկական համաժողովը լավագույն դեպքում կարող է աշխատանք տանել հարցի նախապատրաստման ուղղությամբ, բայց ոչ այն լուծել այս օրերին: Կարելի է մտքերի փոխանակություն ունենալ հարցի հետագա քննարկման նախապատրաստական աշխատանքների հետ կապված: Ասենք, երկու ուղղագրությունների միասնականացման ուղիների տարբերակների հնարավորությունը: Քննել այդ տարբերակներից յուրաքանչյուրի առավելություններն ու բացասական կողմերը:

Նախ՝ պետք է անվերապահորեն ընդունել, որ ուղղագրության լուծման մեկ եղանակ կա՝ գիտական եղանակը: Ոմանք, մի կողմից՝ խոսում են ժողովրդավարության, միասնության մասին, մյուս կողմից ուզում են ճնշում գործադրել հանրապետության նախագահի, Ազգային ժողովի վրա, լուծելու այդ հարցը՝ շրջանցելով ժողովրդի և գիտության վերաբերմունքը: Մոռանում են, որ լեզվին վերաբերող ամեն մի սկզբունքային հարցի լուծում անհանդուրժելի կլինի առանց ժողովրդի կամքի: Ոչինչ այնքան ամբողջ ազգինը չէ և նրա յուրաքանչյուր անհատին, որքան լեզուն: Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ և գտնել համապատասխան մոտեցման եղանակ: Կարծում եմ՝ Մայր Հայաստանի և Սփյուռքի ներկայացուցիչներից պետք է կազմել աշխատանքային խումբ, որին և հանձնարարել հարցի հետագա քննարկումը:

Այս հարցը լուծելիս պետք է հաշվի առնել, որ վերջին արտագաղթի պատճառով Սփյուռքի կազմը զգալի չափով փոխվել է: Սփյուռքն ավելացավ մոտ մեկ միլիոն հայով, որոնք կրում են արևելահայերենը իր ոչ միայն ուղղագրությամբ: Նրանց ներկայացուցիչների մասնակցությունը նույնպես պետք է ապահովել հարցի քննարկմանը:

Չպետք է մոռանալ, որ ուղղագրությունը գրական լեզվի երկու տարբերակներից յուրաքանչյուրի գրավոր խոսքի գրային դրսևորմանն է վերաբերում. նշանակում է՝ ուղղագրությունը ոչ թե ժողովրդինն է կամ նրա մի հատվածինը, այլ այդ հատվածի լեզվինը: Ուրեմն՝ ուղղագրության հարցը չի կարելի հենց այնպես հապշտապ քննել՝ կտրված այն լեզվից, լեզվաձյուղից, որին պատկանում է ինքը: Այլ կերպ ուղղագրության հարցը կարելի է քննել հմապատասխան երկու լեզուների, ավելի ճիշտ հայոց լեզվի երկու ճյուղերի մերձեցման խնդրի հետ կապված: Վերջապես, ուղղագրության միասնականության հարցը քննելիս չի կարելի ելնել հատվածական տրամադրություններից, այլ մեր հայոց լեզվի հետագա զարգացման շահերից: Հարցի քննարկման համար անհրաժեշտ տվյալները ներկայացնելիս չպետք է շրջանցել տարակարծությունները: Այսպիսի փաստ. արևմտահայ մտավորականների մեջ կան այնպիսիները, ովքեր կարծում են, որ արևելահայերենի ուղղագրությունը նախընտրելի է արևմտահայերենից: Ահա սիրիահայ հայտնի գիտնական, հայագիտական շատ ուսումնասիրությունների հեղինակ Ռոպեր Ճեպեճյանի մի հոդվածի վերնագիրը ուղղագրության միասնականացման մասին. «Հնչական ուղղագրությունը փրկարար պիտի ըլլա սեփական գիրեն հեռացած Սփյուռքի նոր սերնդի համար»:

Ամփոփեմ այս հարցի վերաբերյալ իմ ասելիքը. ուղղագրությունը գիտական հարց է, ուրեմն այն քննարկելու դեպքում պետք է նախ քննել մասնագետների, մտավորականների մեծ աշխատանքային խմբում և արդյունքները ներկայացնել պետականորեն հաստատելու համար: Հարցը մինչև հաստատումը կարելի է նաև դնել հանրաքվեի:

Ուզում եմ կանգ առնել մի հարցի վրա, որը նոր խնդիրներ է դնում մեր առջև. նկատի ունեմ թե՛ գիտությունների ազգային ակադեմիան և հատկապես լեզվի ինստիտուտը, թե՛ կրթության և գիտության նախարարությունը: Դա վերջին տարիներին Հայաստանից արտագաղթած թվաքանակով մեկ միլիոնի մոտեցող հայության ձևավորված նոր սփյուռք է, որի նկատմամբ Հայաստանի թե՛ իշխանությունները, թե՛ գիտական և ուսումնական հաստատությունները, թե՛ մշակույթի գործիչներն ունեն կարևոր անելիքներ: Արտագաղթածների ավելի քան հիսուն տոկոսը բնակություն է հաստատել նախկին Խորհրդային Միության տարածքում, գերազանցապես Ռուսաստանում: Շուրջ երեսուն տոկոսը ԱՄՆ-ում է, իսկ մնացածը՝ Հարավային Ամերիկայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում:

Անհրաժեշտ է ծրագիր մշակել, դիմել կազմակերպական քայլերի՝ նպաստելու համար արտագաղթածների ազգային դիմագծի պահպանմանը: Խոսքս վերաբերում է ամենից առաջ մայրենի լեզվին: Մեր հայրենակիցները մեծ մասամբ հիմնել են համայնքներ, և բնականաբար առաջ է գալիս մայրենի լեզվով ուսման ապահովումը, եթե ոչ պետական, ապա գոնե մասնավոր սկզբունքով: Ծագում են նորանոր խնդիրներ՝ դասագրքերով, ձեռնարկներով, և այլ պարագաներով ապահովում: Կարիք կզգացվի նաև լուծել ուսուցիչների հարցը: Անհրաժեշտ է համապատասխան երկրի պետական մարմինների միջոցով, գուցե և այլ ուղիներով կապեր հաստատել այդ նոր համայնքների հետ (օգտագործելով նաև տվյալ երկրի հայկական կազմակերպությունների հնարավորությունները) պարզել հատկապես եղած կամ հնարավոր հայկական կրթօջախների հնարավորությունը և մեր օգնության անհրաժեշտությունը, բնույթը, չափը: Ինչպիսի՞ն կլինի հայապահպանության խնդրի լուծումն այդ նոր գաղթավայրերում: Դա կախված է այն բանից, թե մենք որքան շուտ ենք սկսում մեր կազմակերպած օժանդակությունը, որքան արդյունավետ են մեր կապերը այդ համայնքների հետ: Կարծում եմ՝ նյութական հարցերը կլուծեն տեղի ձեռներեցները: Անհրաժեշտ է անհապաղ կատարել գործնական քայլեր: Այլապես կարող է նրանց կրթության, ազգային դաստիարակության հիմքը դրվել այլ կերպ և այդպես էլ շարունակվել:

ԱՇԽԱՐՀԻ ՅՈԹ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ



Աշխարհի յոթ հրաշալիքների մասին հիշատակությունները առաջին անգամ հայտնվեցին հելլենիզմի դարաշրջանի հույն հեղինակների ստեղծագործություններում: Հրաշալիքների «ընտրությունը» կատարվում էր աստիճանաբար և ժամանակի ընթացքում մի «հրաշալիքը» փոխարինվում էր մեկ ուրիշով: Այդ ցուցակի մեջ մտնում էին իրենց ժամանակի ճարտարապետական ամենանշանավոր և տպավորիչ կառույցները: Այսպես, իր ժամանակին«յոթ հրաշալիքների» ցանկում հայտնվել են Բաբելոնի պարիսպները, Ալեքսանդրյան գրադարանը, Զևսի տաճարը Կիզիկում, Մեմնոնի երգող արձանները: Հռոմի ժամանակներում՝ Կոլիզեյը և Կապիտոլիումը, Սողոմոնի տաճարը, Նոյյան տապանը, Բաբելոնի աշտարակը և այլն: Դարերի ընթացքում հետզհետե ճշտվեց, սրբագրվեց «հրաշալիքների» ցանկը և այսօր մարդկությունը վավերացրել է «Աշխարհի յոթ հրաշալիք»...

...Եգիպտական բուրգերը և երեքից ամենավիթխարին՝ ՔԵՈՓՍԻ ԲՈՒՐԳԸ (ճարտարապետ Խեմիուն, 27-րդ դար մ.թ.ա.): Սկզբնապես նրա բարձրությունը եղել է 147 մետր, իսկ հիմքի երկարությունը՝ 232 մետր: Բուրգի կառուցման համար օգտագործվել է 2 միլիոն 3 հարյուր հազար քարաբեկոր, որոնցից ամեն մեկը միջինը կշռել է 2,5 տոննա: Հին ժամանակներում բուրգերը երեսապատված էին սպիտակ կրի հղկված սալիկներով, իսկ գագաթները՝ արևի տակ փայլող պղնձյա թիթեղներով:

ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐԸ: Գտնվում են բաբելական Նաբուխոնոգոսոր թագավորի (605-562 մ.թ.ա.) պալատի տարածքում: Այդ այգիները նա հիմնել է տվել իր սիրեցյալ կնոջ՝ միդիական արքայադստեր համար: Այգիները տեղավորված են քառահարկ աշտարակի հարթակներում: Դարավանդ հարթակները իրար էին միանում վարդագույն և սպիտակ մարմարի լայն աստիճաններով: Ամեն օր հազարավոր ստրուկներ խորը ջրհորներից ջուր էին մղում աշտարակի գագաթը, որտեղից այն հոսում էր ներքևի հարկերը:

Բաբելոնի ավերումից հետո ջրհեղեղները քանդեցին պալատի պատերը, դարավանդների հենասյուները: Երբեմնի մարդկային և ինժեներական մտքի թռիչքի ստեղծագործության միակ հետքը Բաղդադից 90 կմ հեռավորության վրա, Խիլլե քաղաքի մոռակայքում ջրանցքների պահպանվող խրամատներն են:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԶԵՎՍԻ ԱՐՁԱՆԸ: Աստվածների և մարդկանց գլխավոր աստծու արձանը գտնվում է Օլիմպիական սրբավայր Զևսի տաճարում: Արձանի հեղինակն է հույն նշանավոր քանդակագործ Ֆիդիասը: Նա Զևսի մարմնի բաց մասերը ծածկել է փղոսկրյա սալիկներով, իսկ հագուստը ծուլել է ոսկուց: Արձանի բարձրությունը 17 մետր է: Ոսկուց և փղոսկրից է պատրաստված նաև Զևսի գահը: Ենթադրվում է, որ 4-րդ դարում Զևսի արձանը տեղափոխվել է Կոստանդնուպոլիս և տեղադրվել մայրաքաղաքի ձիարշավարանում, որտեղ էլ ոչնչացել է հրդեհից:

ՀԱԼԻԿԱՌՆԱՍԻ ԴԱՄԲԱՐԱՆԸ: Այստեղ էր ամփոփված Մովզոլ թագավորի աճյունը (վախճանվել է 353թ. մ.թ.ա.): Դամբարանը անվնաս կանգնած մնաց գրեթե 1800 տարի, մինչև 15-րդ դարը և քանդվեց խաչակիրների կողմից, որոնք դամբարանի հսկա սալերը օգտագործեցին կառուցելու իրենց սբ. Պետրոսի ամրոցը (այժմ՝ Թուրքիա, Բոդրում):

ԷՖԵՍՅԱՆ ԱՐՏԵՄԻՍԻ ՏԱՃԱՐԸ: Սա ամենափառավոր կառույցն էր և անտիկ աշխարհի երկրպագության խոշորագույն կենտրոն: Աստվածուհուն նվիրված վիթխարի տաճարը կառուցվել է 6-րդ դարում (մ.թ.ա.), ճարտարապետն էր Խերսիֆրոնը: Փոքրասիական հույների գլխավոր սրբավայր Արտեմիսի տաճարը հրդեհեց և ավերեց Հերոստրատը, սակայն 25 տարի հետո Ալեքսանդր Մակեդոնացին, վերականգնեց այն:

263 թվականին Փոքր Ասիա ներխուժած գոթերը, որոնք լսել էին Էֆեսի և Արտեմիսի տաճարի անբավ հարստությունների մասին, թալանեցին տաճարը: Հաջորդ հարվածը այդ հրաշալիքին հռոմեական կայսրությունում կրապաշտական սրբավայրերի արգելումն էր, որն էլ եղավ տաճարի գոյության վերջը:

ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ ՓԱՐՈՍԸ: Այն կառուցված էր հելլենիստական Եգիպտոսի կենտրոնի՝ Ալեքսանդրիայի տարածքում, Փարոս կղզու վրա: 120 մետրանոց եռահարթակ աշտարակի առաջին հարթակը ուներ չորս կողմ, որոնք ուղղված էին դեպի հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք: Երկրորդ հարթակի ութ կողմերը կողմնորոշված էին դեպի քամիները: Երրորդ հարկը՝ փարոսն էր: Գմբեթը պսակվում էր Պոսեյդոնի յոթ մետրանոց արձանով: Զարմանալի շինությունը կանգուն մնաց մինչև 14-րդ դարը: Սակայն, նույնիսկ ավերված վիճակում նրա բարձրությունը հասնում էր 30 մետրի: Այսօր պահպանվել է Փարոսի տանիքը, որն ամբողջությամբ ընդգրկվել է միջնադարյան ամրոցի մեջ (այժմ՝ եգիպտական նավատորմի հենակայանը):

ՀՈՌՈԴՈՍԻ ԿՈԼՈՍԸ (ՀՍԿԱՆ): Քանդակագործ Խարեսի հեղինակած Հելիոսի արձանն է Հռոդոս կղզում: Աստծո արձանը դրված էր Հռոդոսի նավահանգստի հենց մուտքի մոտ և երևում էր անգամ մոտակա կղզիներից: Արձանի բարձրությունը 30 մետր էր: Բրոնզե հսկայի կառուցումը տևեց 12 տարի, սակայն այն կանգուն մնաց ընդամենը 56 տարի: 220 թվականի (մ.թ.ա.), երկրաշարժի ժամանակ արձանը տապալվեց՝ չդիմանալով երկրակեղևի ցնցումներին: Իսկ արձանը վերականգնելու փորձերը առայժմ անցել են ապարդյուն:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Սկիզբը՝ 3-րդ էջում)

ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց հեղինակը եզրահանգում է, որ Հայաստանի անասնապահության համար շվիցի կիրառումն ավելի հեռանկարային է, քանզի խառնածիններն օժտված են ավելի բարձր մթերատվությամբ և վերարտադրողականությամբ, լավ են օգտագործում լեռնային արոտները, որի շրջանում ստացվում են անասնաբուծական մթերքների կեսից ավելին:

Ներկայումս, երբ հանրապետությունում իրականացված ագրարային բարեփոխումների արդյունքում ողջ անասնագլխաքանակը կենտրոնացվել է գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում, և ձևավորվել են արմատապես նոր տնտեսական հարաբերություններ, դարձյալ կիրառելի են ակադեմիկոս Ալ.Թամամշևի կողմից *կովերի կերակրման մեթոդները* (նորմաները), ինչպես նաև կաթնային տնտեսությունների վարման հիմնարար սկզբունքները»:

«Ինձ համար մեծ պատիվ է գտնվել Ալ.Թամամշևի անասնաբույծ-գիտնականների հետնորդ դասականների շարքում՝ կրելով *Կովկասյան* տարածաշրջանում այդ ոլորտի միակ (եզակի) կին դոկտորի տիտղոսը՝ պատմական առումով: Ես քառորդ դար տքնել եմ *կովկասյան* գորշի գիտական հետազոտությունների՝ միկրոսկոպիկ կառուցվածքի և մաշկն իբրև արտադրական հումք դասակարգելու ուղղություններով, որոնք կարևոր ներդրումներ են՝ առաքելություն, անասնաբուծության (տավարաբուծության) կիրառական կենսաբանությանը: Ահա այս իրավունքով էլ խոսք եմ հղում...

Ալ.Թամամշև գիտնականի, անասնաբույծ - գործչի մեծությունը նաև նրանում է, որ նրա *գործը առօրեական է* աներևակայելիորեն համահունչ են նրա պահանջները, նախանշած ուղղությունները՝ հանրապետության անասնաբուծության զարգացման վերընթացի հանդեպ: Գիտականացում... ոչ այլ ինչ... Դարասկզբից ի վեր՝ շուրջ մեկ 65-ամյակ, նա անձամբ տքնեց այս խնդրի իրականացման վրա՝ անասնաբուծության գիտականացման հիմունքները արմատավորելով թե՛ գյուղական տնտեսություններում (կոլխոզ, սովխոզ), թե՛ իր նախաձեռնությամբ հիմնադրված գիտական հիմնարկների ընթացիկ գործունեության մեջ և թե՛ իր աշակերտների (ժամանակակից անասնաբույծների, գիտնականների) համոզմունքներում և հայեցողության մեջ: Ահա և դարագլխին հանրապետությունը Միության մեջ ճանաչվեց այն միակը, ուր արտադրության անասնաբույծ-մասնագետների և գիտության աշխատողների նպատակադիր և համագործակցված աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին բոլոր տեսակի գյուղատնտեսական կենդանիների բարձր մթերատու նոր ցեղեր, (որոնք նշվում են վերը): Այդ գործի գիտական կենտրոնը Հայկական անասնաբուծության և կերարտադրության գ/հ ինստիտուտն էր և վերջինիս ենթակայության ներքո գործող տոհմային փորձարարտադրական տնտեսությունները:

Խորհրդային Միության փլուզումին համընթաց խաթարվեց գիտաարտադրական նմանօրինակ համագործակցությունը, դանակի տակ առնվեցին տոհմային արժեք ներկայացնող կենդանիները, գիտաարտադրական բազաների բացակայության, ինչպես նաև նյութատեխնիկական պայմանների սղության պատճառներով այժմ խաթարվել է նաև հիշյալ ինստիտուտի առօրյա գործունեությունը: Այսօր, քան երբևէ, օրհասական է դարձել թե՛ ինստիտուտի և թե՛ Հայաստանի էթնիկ ցեղերի գոյության խնդիրները:

Մինչդեռ մեր առօրյայում կանգնած է (առկա է) Նոր գյուղի կազմակերպման պրոբլեմը: Իզուր է թվում շատերին (նաև որոշ իշխանավորների), թե՛ Նոր գյուղի էկոնոմիկայում, որտեղ դեռևս գերակշռում են գյուղացիական մանր և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները, որ գործում են (աբորիգեն, պրիմիտիվ) տարերային, զուտ սիրողական հիմունքներով, առանց անասնաբուծության (և բուսաբուծության) գիտական եղանակների կիրառության, կարող կլինեն նպաստ բերել թե՛ անհատական տնտեսությանը և թե՛ ընդհանուր առաջընթացին: Նոր գյուղի կառուցողական առօրյայում, ճիշտ է, ի հայտ են եկել գյուղացիական ֆերմերային կառույցները (որոնք դեռևս փոքրամասնություն են կազմում) հետևապես գյուղացիական տնտեսությունում բացակայում է հոմոգենության միատարրության նիշը, պատկերը: Քանզի անասնաբուծության վերելքը պահանջում է բարձր (գիտական) մոտեցումներ. սելեկցիա՝ տրամախաչում, զույգերի ընտրություն, բազմացման կենսաբանության օրինաչափությունների զգոն հաշվենկատություն, արհեստական սերմնավորման կիրառում, կերակրման և խնամքի բավարար կիրառություն և այլն:

Պետք է հասնել այդ խնդիրների լուծմանը:

Այնժամ գյուղը կդառնա գյուղատնտեսական (նաև անասնապահական) մթերքների արտադրության շտեմարան-մատակարար և ծանրակշիռ տեղ կգրավի շուկայական առօրյայի հարաբերություններում:

Ուրեմն՝ կրկին *գիտականացում*, որ երաշխիք կհանդիսանա էթնիկ ցեղերի գենոֆոնդի պահպանմանը, որի համար կան գիտական բարձր դասայնության կադրեր՝ դոկտոր-պրոֆեսորներ (ցեղերի հեղինակներից՝ Վ.Հակոբյան, Ռ.Վառյան, Վլ.Զորանյան, Ռոբերտ Վարդանյան և այլ մասնագետներ):

Հուզումնալից են իմ, գիտնականիս, մտորումները և մտահոգությունները վերոգրյալ խնդիրների առթիվ. անցանկալի է էթնիկ ցեղերի կորսվելու ճակատագիրը:

Իսկ գրողիս տողերում մտորումներս հետևյալն են.

«Կանգ առ, գյուղի մարդ,
Մի լավ մտորիր,
Սիրիր հողը, այն քոնն է...
Տեր եղիր նրան, այն քոնն է...
Շարիր ակոսդ,
արա հերկը, այն քոնն է...
Ստացիր բերքդ
զորավիգ Հայաստան երկրիդ.
Այն քոնն է...

* * *

Տեսե՞լ եք արդյոք իմ հայրենիքը՝
Պապակ դաշտերը
Դատարկ դաշտերն ու հնձանները...
Տեսե՞լ եք արդյոք՝
անկարգ մորթերը՝
բյուր կենդանիների...
Որոնց կաշին-մաշկերը
իբրև ունեցվածք
բաժին են դառնում
Լոկ շուն ու գելի...
Իմ հայրենիքը տեսե՞լ եք արդյոք՝
խամրած հայացքներ
ու հյուծված դեմքեր,
Բեկված ու խեղված
Ծուռ ու մուռ շարքեր...
Որ ետ են նայում
և ոչ թե առաջ...
Իմ հայրենիքը
Տեսե՞լ ես՝
Ասա՛...

Օգտվելով հանդիսության կայացման փաստից, հանրապետության անասնաբույծ-գիտնականներս ահազանգում ենք՝ խնդրանք ներկայացնելով Հայաստանի գիտության կաճառի՝ Ազգային ակադեմիայի նախագահությանը, անձամբ նրա նախագահ, մեծարգո ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ՝ սատար կանգնելու Հայկական անասնաբուծության գ/հ ինստիտուտի գործունեության վերականգնմանը:

ՄԵԴՈՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գյուղ.գիտ.դոկտոր, լրագրող

(Սույն հոդվածի հրապարակման հովանավորն է Առինջի ֆերմերային տնտեսության գործադիր տնօրեն, տիկին Ռոզա ԾԱՌՈՒԿՅԱՆԸ):

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան – 19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 30.05.2002թ.
"ГИТУТЮН" ("Наука") – газета НАН РА